

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ Քաղաքական Նոր Մշակոյթ

Վերջին ամիսներուն Հայաստանի մէջ տեղի կ'ունենան լայնածաւալ փոփոխութիւններ գրեթէ բոլոր բնագաւառներէ ներս, ըլլան անոնք քաղաքական, տնտեսական, ընկերային եւ այլ մարզերու մէջ:

Մարտ 19-ին վարչապետ Նիկոլ Փաշինեան Մատենադարանէն ներս հրաւիրած էր մամուլի ասուլիս մը, որու ընթացքին ան 4,5 ժամ տեւողութեամբ պատասխանեց լրագրողներու բազմատեսակ հարցերուն՝ սկսած Արցախեան հարցէն, անցնելով տնտեսականին եւ նոյնիսկ անդրադարձ կատարելով վարչապետի ընտանիքի հետ կապուած հարցերուն:

Հայաստանի ղեկավարին կողմէ նման մատչելիութիւն, ըլլայ այդ լրագրողներուն թէ պարզ ժողովուրդին հետ յարաբերելու առումով, եզակի երեւոյթ է երկրէն ներս: Անցեալին, Հայաստանի նախագահները շատ հազուադէպ կը կը շփուէին մամուլի հետ, իսկ փողոց իջնալով հասարակութեան հետ բաց խօսակցութիւն ունենալը բացառուած էր: Ռուպերթ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի օրօք, յատուկ ընտրուած լրագրողներ կ'առաջնորդուէին նախագահական պալատ, ուր նախապէս ծրագրուած պայմաններու տակ անոնք կը պատասխանէին ընդհանրապէս քաղաքական հարցերու: Ոչ մէկ լրագրող կը համարձակէր «դժուար» հարցեր տալ նախագահին, իսկ անոնց ընտանիքի անդամներու մասին նիւթերը կը պահուէին որպէս «պետական գաղտնիք»:

Փաշինեանի իշխանութեան գալէն ասդին այդ բոլոր աւանդական սովորոյթները դադարած են ի գօրու ըլլալէ: Որպէս երկրի առաջին դէմք ան կը ցուցաբերէ թափանցիկ մօտեցում հասարակութեան հետ յարաբերելու առումով: Ոմանք, երկրի ղեկավարի կողմէ այս վերաբերմանը կը նկատեն պարզ ամբոխավարութիւն: Սակայն, նման բաց խօսակցութիւնը լրագրողներու եւ պարզ ժողովուրդի հետ առիթ կու տայ աւելի մօտէն տեղեկանալու հասարակութեան դիմագրուած խնդիրներուն, փոխանակ յատուկ պատրաստուած զեկոյցներու ընդմէջէն ծանօթանալու երկրին մէջ տիրող իրավիճակին:

Թաւշեայ յեղափոխութիւնը իր հետ բերաւ բազմաթիւ նորութիւններ՝ Հայաստանի եւ Հայաստանցիներուն կեանքէն ներս, որոնց շարքի է նաեւ հասարակութեան հետ բաց խօսելու մշակոյթի ծելաւորումը, որ խթան կը կրնայ հանդիսանալ իշխանութեան հանդէպ ժողովուրդի վստահութեան մակարդակի բարձրացման՝ անկէ բխող բոլոր դրական հետեւանքներով:

«ՄԱՍԻՍ»

«Մեր Կառավարութեան Սօս «Հաշուեյարդար» Բառապաշար Գոյութիւն Զուճի», Յայտարարեց Փաշինեան

Մարտ 19-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան հրաւիրած էր մամուլի ասուլիս մը, որու ընթացքին ան պատասխանեց ներքին ու արտաքին մարզերուն վերաբերող հարցերու երկար շարքի մը:

Ռուպերթ Քոչարեանի եւ «Մարտի 1-ի» գործերուն վերաբերող հարցերուն պատասխանելով Փաշինեան շեշտեց որ հաշուեյարդար տեսնելու հարց չկայ: «Հաշուեյարդարի հետ կապուած՝ ընդհանրապէս կարծում եմ, որ դա անհամատեղելի բառապաշար է մի կառավարութեան նկատմամբ, որը այդպիսին դարձել է սիրոյ, համերաշխութեան լեզվափոխութեան միջոցով, որովհետեւ եթէ հաշուեյարդարի տրամադրութիւն լինէր, շատ կարճ, կոնկրետ հաշուեյարդարներէ եւ հնարաւորութիւն կար, եւ ժամանակը կար, եւ համատեքստը կարող էր լինել», շեշտեց Փաշինեան:

«Ես այդ գործի վերաբերեալ չեմ ցանկանայ շատ մեկնաբանութիւններ անել, որպէսզի դա որեւէ կերպով չդիտարկուի որպէս, էսպէս ասած, ուղղորդում որեւէ գործընթացի», - ըսաւ վարչապետը: Այլեւայլ հարցերու մասին վարչապետը ըսաւ.

ԼՂՀ Դարցի մասին

«Ես՝ որպէս բանակցութիւններուն նոր մարդ, ունեմ բազմաթիւ հարցեր: Ես պէտք է հասկանամ, թէ ինչ է կատարուած, ամէն բառը եւ ամէն փուլը: Սա քմահա-



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան մամուլի ասուլիսի ընթացքին

ճոյք չէ, այլ անհրաժեշտութիւն: «Ես ստացել եմ հսկայական տեղեկատուութիւն, բայց դա նոր տեղեկատուութիւն ստանալու անհրաժեշտութիւն է առաջացնում:

«Ակնկալում եմ՝ Ատրպէյջանի նախագահի հետ հանդիպմանը մի շարք պարզաբանումներ ստանալ: Առհասարակ, իհրամ Ալիեւի հետ հանդիպումները դրական եմ գնահատում: Դրական եմ համարում այն երկխօսութիւնը, որ դեռ պէտք է գայ»:

Ատրպէյջանի հետ փոխադարձ հայիոյանքներու մասին
«Ընկերային ցանցերում Ղաբաբաղի հետ կապուած քննար-

կումներում տեսնում եմ, որ հայերի եւ Ատրպէյջանի միջեւ փոխադարձ հայտնաբերման անասելի տարափ կայ: Բայց ժամանակը չէ, որ բացի հայտնաբերման, մարդիկ քննարկեն խնդիրը եւ թէ ինչ է կատարուած: Եթէ մենք կարողանում ենք երկրի ղեկավարների, արտաքին գործոց նախարարների մակարդակով խօսել, ինչու է չի կարելի նոյնն անել աւելի լայն շրջանակներում»:

Սպառազինութեան մասին
«Մենք 2018-ի Մալիսից քայլեր ենք անում սպառազինութեան,

Շար.ը էջ 5

Եթէ Պաքուն եւ Երեւանը Պայմանաւորուին, Մոսկուան Կ'ողջունէ Ղարաբաղի Ներգրաւումը Բանակցային Գործընթացին. Զախարովա

«Ռուսաստանը՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկիր, բազմիցս ըսած է, որ բանակցային ձեւաչափի փոփոխութիւնը հնարաւոր է միայն կողմերու համաձայնութեամբ: Եթէ Պաքուն եւ Երեւանը պայմանաւորուին, որ Լեւոնալին Ղարաբաղն ալ պէտք է ներգրաւուի բանակցային գործընթացին, մենք կ'ողջունենք այդ որոշումը», - ըսած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ ձեպագրոյցի ժամանակ պատասխանելով ատրպէյջանցի լրագրողի հարցին:

«ԵԱՀԿ Մինսքի խումբը Մարտ 9-ին տարածած է յայտարարութիւն, ուր յստակ նշուած է Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու դիրքորոշման մասին այս հարցի վերաբերեալ», - աւելցուցած է Զախարովան:

Ան բարձրաձայնած է եւս մէկ հարց, որ առնչութիւն ունի դարաբաղեան խնդրին: Յիշեցնենք՝ երկու օր առաջ Ռուսաստանի արտա-



Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Մարիա Զախարովա

քին գործոց նախարարութիւնը նախագրուած ցուցած է Ատրպէյջանի մեկնող Ռուսաստանի քաղաքացիները՝ մանրակրկիտ գնահատել հաւանական վստահութեան: Ըստ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան՝ զարգացող են

Նոր Զելանտայի Սէջ Սզկիթներուն Վրայ Յարձակած Անձի Զէնքերուն Վրայ Հայերէն Գրութիւններ Եղած Են



Նոր Զելանտայի մէջ մզկիթներու վրայ զինուած յարձակում գործած անձերու զէնքերուն վրայ տարբեր լեզուներով, այդ շարքին՝ վրացերէն եւ հայերէն գրութիւններ եղած են: Այս մասին կը վկայեն դէպքի առնչութեամբ տարածուած տեսանիւթերուն մէջ երեւցած քատրերը:

Վրաստանի պետական անվտանգութեան ծառայութիւնը ար-

Շար.ը էջ 5

ՇԱԲԱԹԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ապշեցուցիչ է. Ինչ Կը Մտածի Ալիեւը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Ինչ ենք անում, եթէ Ալիեւը մերժում է բանակցել Արցախի հետ, արդեօք Հայաստանը չի դառնում ապակառուցողական՝ բանակցալին գործընթացի առումով: Մարտի 12-ին Ստեփանակերտում Նիկոլ Փաշինյանի յայտնի ելույթից յետոյ այդ հարցերը հնչում են յաճախ, թէեւ դրանք հնչում էին նաեւ աւելի վաղ, այն բանից յետոյ, երբ 2018-ի Մայիսի 3-ին Փաշինյանն առաջին անգամ յայտարարեց Արցախի բանակցալին կողմ լինելու անհրաժեշտութեան ու եռակողմ ձեռնարկի վերականգնելու մտտեցման մասին:

Հարցադրումը, թէ ինչ է անում Հայաստանը, եթէ չի համաձայնում Ատրպեյձանը, առերեւոյթ թուում է Երեւանի յայտարարութիւններից բխող տրամաբանական շարունակութիւն, սակայն այստեղ գործ ունենք թերեւս հայկական կողմի համար աւելի խորքային մի խնդրի հետ:

Փաստացի, մենք մտածում ենք, թէ ինչ ենք անելու, եթէ Ալիեւը մերժի մեր որեւէ դիրքորոշում: Դրանք երբեք է ենթադրատակցական մի վիճակ, երբ մենք մեզ «պարտաւորուած» ենք համարում չանել քայլեր, որոնք Ալիեւը կարող է մերժել եւ յայտարարել մեզ ապակառուցողական: Զարմանալի է, թէ ինչու՞ նոյն հարցը չի տրուում օրինակ Արցախի կարգավիճակի առումով: Չէ՞ որ Ալիեւը դա էլ է մերժում: Ալիեւը որեւէ կերպ չի ընդունել, որ Արցախը պէտք է ունենայ անկախ կարգավիճակ: Այդ դէպքում ինչու՞ ենք դա ասում, չէ՞ որ կը դառնանք ապակառուցողական:

Որովհետեւ այդ դէպքում Միւսկի խմբի համանախագահները կը համարեն, որ Ալիեւն արդէն չափն անցնում է: Իսկ ո՞վ ասաց, ի՞նչ գիտենք, ո՞րն է չափը այդ հարցում: Օրինակ, ապրիլեան պատերազմում Ալիեւը չափն անցա՞ւ, գրոհելով Արցախը: Թէ՞ չափի մէջ էր: Յամենայն դէպս պարզ չէր, որովհետեւ կարծես թէ ոչ ոք նրան չէր նախատեսել չափն անցնելու համար: Մինչ այդ էլ նրան չափն անցնելու համար չէին նախատեսել, երբ հայկական ուղղաթիւրը խոցեց, որն ուսումնասիրածական թռիչք էր իրականացնում:

Հայկական հանրութիւնը մտածում է, թէ ի՞նչ կը մտածի Ալիեւը հայկական շահի եւ անվտանգութեան ձեռնարկի մասին: Ալիեւն օրինակ ոչինչ էլ չի մտածում, երբ յայտարարում է Երեւանը վերցնելու մասին: Ու թէեւ Սերժ Սարգսեանը յայտարարում էր 7 շրջան յանձնելու պատրաստակամութեան մասին, միեւնոյն է Ալիեւին ոեւէ մէկն այդպէս էլ չէր նախատեսել, որ նա անկողնու է եւ պէտք է բաւարարուի 7 շրջանով, մոռանալ Երեւանի մասին:

Գնահատելով տարածաշրջանի, հակամարտ կողմերի հաւասարակշռութիւնը, յաճախ դիտարկուում է առաւելագոյն ռազմատեխնիկական կարողութիւնների, ռազմական ծախսի համեմատութիւնը: Սակայն, հաւասարակշռութիւնը գործնականում խախտուած է հոգեբանութեան, մտածողութեան մակարդակում, որտեղից էլ սկսում են արդէն ռազմա-քաղաքական խնդիրները: Բանն այն է, որ ռազմական յաղթանակից յետոյ հայկական քաղաքական միտքը հանրային գիտակցութեան մէջ հետեւողականորէն ներդրել է միտք, թէ հայկական կողմը պէտք է «կառուցողական» լինի, որպէսզի միջազգային հանրութիւնը մեզ շոյի եւ համակ-

րի, իսկ Ատրպեյձանին՝ նախատի: Մինչդեռ ստացուել է, որ մեր «պոլապոլիտիկանը» վերածուել է հայկական կողմի, ընդ որում ռազմական փուլում յաղթող կողմի քաղաքական փուլի միակ փաստարկը միջազգային կեդրոնների հետ յարաբերութիւններում: Իսկ միջազգային ուժային կենտրոնները մանկապարտէզի դաստիարակ չեն, որ խելօք երեխաներին համակրեն, իսկ անկարգին՝ պատժեն եւ անկիւն կանգնեցնեն:

Նրանք կառավարում են լրջագոյն ռեզիմը եղած խորքային գործընթաց եւ հաշուի առնում այն յարաբերակցութիւնը, որ ձեւաւորում է ռեզիմում խաղացողները վարքագծի արդիւնքում: Եթէ հայկական կողմի վարքագիծը ենթադրում է պետական շահի եւ անվտանգութեան յանձնում, թէ-կողք բանաւոր մակարդակում, նրանք դա չեն կասեցնելու, այն պարզ պատճառով, որ չեն կարող: Ինչպէս որ չեն կարող կասեցնել Ատրպեյձանի ագրեսիոնութեան աճը, եթէ դրա հիմքը տուել է հենց հայկական կողմը:

Նրանք ձգտելու են կառավարել իրավիճակն այդ բալանսով, սակայն 2016-ին պարզ դարձաւ, որ անգամ դա չափազանց բարդ գործ է, եթէ հաւասարակշռութիւնը խախտուած է մտածողութեան, հոգեբանութեան, աշխարհընկալման մակարդակում, եթէ կողմերից մէկը ռազմական փուլում յաղթելով, յետագայ քաղաքական-դիւանագիտական փուլում իր վրայ է վերցրել «խելօք երեխայի» կարգավիճակը: Ընդ որում, մի բան, որը ներսում փորձ է արուել հանրութեան մատուցել իբրեւ դիւանագիտական իմաստութեան բարձրագոյն պիլոտաժ եւ խաղաղութեան բացառիկ գրաւական:

«Ծռերի» Նուէրն Ատրպեյձանին

ՎԱՐՄԱՍ ԱԹԱՆԵԱՆ

Սասնայ Մռեր արցախեան կուսակցութիւնը յայտարարել է ստորագրահաւաք սկսելու մասին: Նպատակն է հասնել նրան, որ Արցախի ընտրողներն ընդգրկուեն Հայաստանի ընտրողների ռեզիստում, «սահմանուած կարգով Արցախում ձեւաւորուեն ընտրական տարածքներ եւ ընտրական տեղամասեր, ինչպէս նաեւ կազմաւորուեն համապատասխան ընտրական յանձնաժողովներ»:

Հայաստանում քաղաքական ֆիւսկոյի ենթարկուած, փաստացի մարգինալացած ուժն, այսպիսով, գործունէութեան ասպարէզ է ընտրում Արցախը՝ փորձելով խաղալ մարդկանց զգացմունքների վրայ: Մռերի այդ նախաձեռնութիւնը, սակայն, միայն առաջին հայեացքից է թուում յուզական պոռթկում: Իրականում դա խիստ վտանգաւոր քայլ է, որը կարող է լրջօրէն վտանգել կարգաւորման բանակցութիւնները: Աւելի գեղեցիկ եւ այժմէական նուէր Ատրպեյձանին, որն առանց այդ էլ պնդում է, որ Արցախը չունի սուբիեկտութիւն, կառավարում է Հայաստանից, դժուար է պատկերացնել: Եւ հարց է առաջանում՝ ու՞մ շահերին են սպասարկում Սասնա ծռերը, երբ նախաձեռնում են ապրիլի ոչ օրինական գոր-

ծընթաց: Չէ՞ որ 1991թ. Դեկտեմբերի 10-ի հանրաքուէով Արցախը հռչակուել է անկախ պետութիւն, ունի իր սահմանադրութիւնը, որով կազմաւորում է իշխանութիւնը: Մռերը դէ՞մ են արցախահայութեան՝ հանրաքուէով արտայայտած կամքին, չե՞ն ճանաչում Արցախի օրինական իշխանութիւններին, հակադրում են Հայաստանի վարչապետին, ով փորձում է բանակցութիւնների սեղանին վերադարձնել Արցախի ընտրեալ ներկայացուցիչներին: Այս վերջին տպաւորութիւնն աւելի է առարկայանում, երբ ուշադրութեան ենք առնում ստորագրահաւաք մեկնարկելու ժամանակահատուածը՝ Ստեփանակերտում Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան խորհուրդների համատեղ նիստից գրեթէ անմիջապէս յետոյ եւ Փաշինյան-Ալիեւ

հանդիպմանն ընդառաջ: Վարչապետ Փաշինյանը վստահեցրել է, որ Ալիեւի հետ քննարկելու է բանակցութիւնների լիարժէք ձեւաչափի վերականգնման խնդիրը: Սասնայ ծռերի նախաձեռնած ստորագրահաւաքի համապատկերին կարելի է կանխատեսել, թէ ո՞րն է նաեւ լինելու Արցախը բանակցութիւններից դուրս թողնելու ալիեւեան փաստարկը: Արտառոց է, որ Արցախի քաղաքական ուժերը Սասնայ ծռերի նախաձեռնութեան վերաբերեալ դեռեւս յստակ տեսակէտ չեն արտայայտում: Այս առումով, թերեւս, աւելորդ չէ պատկան մարմնի ուշադրութիւնը հրաւիրել մի հանգամանքի վրայ՝ ինչպէ՞ս է պետական գրանցում ստացել մի ուժ, որի ծրագիրը հակասում է Արցախի սահմանադրութեանը: «ՀՐԱՊԱՐԱԿ»

Այն դէպքում, երբ դրա հետեւանքը եղել է ապրիլեան քառօրյան, որը փաստացի սկսուել է 2013-14 թուականներից:

Բայց, քանի որ միջնորդները դաստիարակներ չեն, այլ աշխարհաքաղաքական կառավարման իւրօրինակ «խորհուրդ», տարիներ շարունակ պարզապէս չեն ընկալել, թէ ինչպէս կարող է որեւէ կողմ ռազմա-քաղաքական միաւորներ եւ խաղաղութիւն փնտռել սեփական շահի եւ անվտանգութեան խնդիրների լիարժէք ձեւակերպումից հրաժարուելով: Բայց վարժուել են, որովհետեւ ի վերջոյ նրանցից որեւէ մէկը Հայաստանի փոխարէն չէր զբաղուելու Հայաստանի քաղաքականութեամբ:

Այժմ, նրանց համար առաջացել է խնդիր, քանի որ Հայաստանի նոր իշխանութիւնը դնում է հարցեր, որոնք դուրս են վարժուած իրավիճակից: Բայց այստեղ էլ տարօրինակ է այն, որ հենց Հայաստանից էլ հնչում են հարցեր՝ իսկ եթէ Ալիեւը չընդունի, հրաժարուի: Ապշեցուցիչ է, երբ հայկական հանրութիւնը մտածում է ոչ թէ իրեն պէտք եղածը ձեւակերպելու մասին, այլ այն մասին, որ յանկարծ չձեւակերպի Ալիեւին պէտք չեղածը:

Ապրիլեան քառօրեայից յետոյ ռազմատեխնիկական եւ ռազմաքաղաքական հաւասարակշռութիւնը զգալի վերականգնուեց՝ հայկական բանակի ջանքով, իսկ քաղաքական իմաստով Հայաստանը շօշափելի առաջ անցաւ թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ: Բայց հաւասարակշռութեան խորքային վերականգնման մասին թերեւս հնարաւոր կը լինի խօսել մտածողութեան, հոգեբանութեան՝ թէ հարցել, թէ ընդհանրապէս հայկական սուբիեկտութեան լայն աշխարհընկալման մակարդակում վերականգնելու դէպքում: «ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՒԻ ՇԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ժողովուրդ» Օրաթերթի խմբագիրը ՅՔԾ-ի Կողմէ Ծնշում Կը Տեսնէ Թերթի Նկատմամբ



«Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիրը դեռ հարցաքննութեան չէ կանչուած Յատուկ Բնիչական Մառայութեան (ՅԲՄ) կողմէ նախաքննութեան տուեալները հրատարակելու դէպքի առթիւ յարուցուած քրէական գործի շրջանակէն ներս:

Քնար Մանուկեանի խմբագրած թերթը առաջին էջի վրայ տպագրած է Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի ցուցմունքէն հատուածներ 2008-ի մարտեան իրադարձութիւններու վերաբերեալ: Աւելի վաղ թերթը հրատարակած էր այս գործի շրջանէն ներս որպէս վկայ հարցաքննուած Սահմանադրական դատարանի անդամ Ֆելիքս Թոխեանի եւ 2008-ին Պաշտպանութեան փոխնախարարի պաշտօնը զբաղեցուցած Գագիկ Մելքոնեանի հարցաքննութիւններէն հատուածներ:

Անկէ ետք Յատուկ քննչական ծառայութիւնը զգուշացուցած էր լրատուամիջոցներուն, որ նախաքննական գաղտնիք պարունակող տուեալներու հրատարակումը կրնայ յանգեցնել քրէական պատասխանատուութեան, իսկ թերթի շաբաթօրեայ համարի լրջ ընծայումէն ետք արդէն քրէական գործ յարուցուած է:

«Ակնյայտ ճնշում լրատուամիջոցի նկատմամբ. մինչ քրէական գործը յարուցելը յայտարարուեց զգուշացում: Սա սպառնալիք է, եթէ ոչ աւել... Քո գործունէութիւնը հնարաւոր կերպ գսպելու, քո յետագայ ընթացքը գսպելու ընթացք տեղի ունեցաւ», ըսած է թերթի խմբագիրը:

Օրաթերթի հրատարակած ծաւալուն սղագրութեան մէջ Սերժ Սարգսեանը ըսած է, որ եթէ ինք պաշտպանութեան նախարար ըլլար, ապա ինքը եւս կը ստորագրէր գործը:

Քոչարեանի Կալանքը Երկու Ամիսով Եւս Երկարածուած է

Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարանը, դատաւոր Արմէն Բեկթաշեանի նախագահութեամբ, որոշած է երկու ամիսով երկարաձգել երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի խափանման միջոց կալանքը: Նման միջնորդութեամբ դատարան դիմած էր Յատուկ քննչական ծառայութիւնը:

Քոչարեանի փաստաբան Արամ Օրբելեանը լրագրողներուն ըսած է, որ դատարանը բաւարարած է կալանաւորելու միջնորդութիւնը, մերժած է գրաւի միջնորդութիւնը:

«Դատարանը նշեց, որ բացառել է թաքնուելու հաւանականութիւնը, այսինքն՝ միակ հիմք ըստ էութեան այն է, որ քանի որ հիմա նիւթերին ծանօթանալու փուլն է, ռիսքային է գնահատել գործի վրայ ազդելու հաւանականութիւնը: Եւ դատարանը գտել է, որ չկայ հիմաւոր կապած կաշառքի դրուագով: Բայց կալանքը երկարացուած է:

գորանոցային վիճակի բերելու հրաման: «Ինչ կատարել են այդ ժամանակուայ ՀՀ նախագահն ու պաշտպանութեան նախարարը, ես համարում եմ, որ կատարել են օրէնքի եւ իրենց իրաւասութեան շրջանակներում եւ ես չեմ պատրաստուած իրաւական գնահատականներ հնչեցնել», - ըսած է նախկին նախագահը:

Քնար Մանուկեանը պնդած է, որ այս նիւթերը իր ձեռքի տակ յայտնուած են նախքան Ռոպերթ Քոչարեանի, Սեյրան Օհանեանի, Եուրի Խաչատուրովի եւ Արմէն Գէորգեանի մասով Յատուկ քննչական ծառայութեան կողմէ նախաքննութեան աւարտի մասին յայտարարելը, եւ ինքը ըսած է, որ անոնք պիտի հրատարակէ աւարտէն ետք: Այդպէս ալ ըրած է:

Մանուկեանը ըսած է, որ իրենք պիտի շարունակեն Մարտ 1-ի գործով ցուցմունքներ հրատարակել, եւ անգամ դատարանի որոշումը աղբիւրը բացայայտելու մասին, իրենց չի կաշկանդեր. - «Արդիւնքի չեն հասնելու: Ես վստահեցնում եմ Ձեզ, ինչ որոշում կը կայացնի դատարանը, ես մինչեւ վերջ կը գնամ: Այն, ինչ ձգտում է այսօր Յատուկ քննչական ծառայութիւնը՝ պարզելու աղբիւր, պատասխանատուութեան կանչելու, ճնշելու լրատուամիջոցին, իրենք արդիւնքի չեն հասնի: Մինչեւ վերջ կը գնամ էն տեսանկիւնից, որ կը հասնեմ այն արդիւնքին, որ երբեք իրենք չեն կարողանայ ճնշել լրատուամիջոցին: Ես շարունակելու եմ իմ գործելաոճը՝ անկախ նրանից, որ այս փուլում Յատուկ քննչական ծառայութիւնը տարածել է հաղորդագրութիւն պատասխանատուութեան մասին: Եթէ անհրաժեշտ լինի, կարող են այլ ցուցմունքներ, որոնք կան իմ ձեռքի տակ, հրատարակուեն»:

է: Պարոն Քոչարեանը նիտին ներկայ էր, բացասական էր արձագանգը, քանի որ ակնկալուած էր այլ արդիւնք, բայց շատ հանգիստ էր», - ըսած է Օրբելեանը: Ըստ Օրբելեանի՝ դատական որոշումը պիտի բողոքարկեն:

Յիշեցնենք, որ Ռոպերթ Քոչարեանը կը մեղադրուի Մարտի մէկի գործով սահմանադրական կարգը տապալելու, ինչպէս նաեւ առանձնապէս խոշոր չափի կաշառք ստանալու համար: Ըստ Արամ Օրբելեանի՝ դատարանը գտած է, որ կաշառք ստանալու կասկած չկայ, իսկ սահմանադրական կարգի տապալման մեղադրանքով հիմք ընդունած է նախորդ դատական որոշումը: «Ես ասում եմ այն, ինչ դատաւորը բանաւոր ներկայացրեց, որ սահմանադրական կարգը տապալելու մասով ինքը կաշկանդուած է իրեն համարել արդէն առկալ չորս դատական աքթերով», - նշած է փաստաբանը:

«Օփերայի Շրջակայքը կը Կերադարձնենք Մշակութային Օճախի Մթնոլորտը» Մարուքեան

«Այսօր մենք ի կատար ենք անում երկար տարիների մեր երազանքը՝ ազատագրում ենք Օփերայի շրջակայքը եւ յետքերում մշակութային օճախի մթնոլորտը», - ֆէյսպուքեան իր էջին գրած է Երեւանի քաղաքապետ Հայկ Մարուքեանը:



Օփերայի մօտէն սրճարաններու հեռացման աշխատանքները՝ ոստիկաններու հսկողութեամբ

Ան նշած է, որ սա գործընթացի սկիզբն է, այն պիտի ըլլայ շարունակական:

«Շնորհակալ եմ բոլոր երեւանցիներին այս հարցում մեր կողքին լինելու համար, մենք գգում ենք ձեր աջակցութիւնը: Վերադարձնենք Երեւանին իր մշակութային դիմագիծը», - գրած է քաղաքապետը:

Նշենք, որ վերջին օրերուն Երեւանի քաղաքապետարանը սկսած է օփերայի յարակից տարածքէն սրճարաններու հեռացման աշխատանքները, ինչը սրճարաններու աշխատակիցներու բողոքի պատճառ դարձած է:

Անոնք, ի նշան բողոքի, փա-

կած էին Մաշտոցի պողոտա-թումանեան փողոց խաչմերուկը:

Երեւանի քաղաքապետի խօսնակ Յակոբ Կարապետեանը լրագրողներու հետ ճեպագրոյցի ժամանակ ըսած էր, որ չի հասկնար թէ ինչու սրճարաններու աշխատակիցները քաղաքապետարանի գործողութիւնները անսպասելի կը գնահատեն - «Փետրուարի 13-ին ուղարկուել է ծանուցում տնտեսվարողներին՝ խնդրելով որ ողջամիտ ժամկէտներում ազատել իրենց գոյքը, նաեւ մաքրել տարածքը ինքնակամ կառույցներից: Ողջամիտ ժամկէտն անցել է»:

«Սասնայ Ծռեր»-ը կը Սկսի Արցախը Հայաստանի Կազմին Մէջ Մարզի Կարգավիճակով Ներառելու Գործընթաց

«Սասնայ ծռեր» կուսակցութիւնը կը սկսի Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմին մէջ, մարզի կարգավիճակով, ներառելու գործընթաց, հրաւիրուած ասուլիսի ժամանակ յայտարարած է կուսակցութեան հիմնադիր անդամներէն Վարուժան Աւետիսեանը:

«Սասնայ ծռեր» համահայկական շարժումն այս գործընթացը սկսում է հիմա, քանի որ դրա համար անհրաժեշտ էր Արցախում ունենալ քաղաքական, կազմակերպչական միաւորում: Այժմ այդ միաւորը կայ՝ օրերս Արցախում գրանցուել է «Սասնայ ծռեր» Արցախի կուսակցութիւնը, որի հիմնական անդամն է այս գործընթացի ապահովումն է», - յայտարարած է Աւետիսեանը:

«Ազատութեան» հարցին, թէ

իրաւական առումով ինչպէ՞ս կը պատկերացնեն այս գործընթացը, արդե՞օք արցախցիները, որոնք իրենց անկախութիւնը տե ետրէ (օրինականապէս) հռչակած են, համաձայն են ստանալ մարզի կարգավիճակ, կուսակցութեան ղեկավար անդամ Ժիրայր Մեֆիլեանը պատասխանած է. - «Մենք վստահ ենք, որ այս գաղափարի հետ կապուած բացարձակ մեծամասնութիւնը կիսում է, եւ վստահ եմ, որ բոլորի սրտով է այս գործընթացը, որ սկսում ենք: Գործընթացի իրաւական ճանապարհները բազմաթիւ են. դա կարող է լինել հանրաքուէների միջոցով, կարող է լինել երկուստեք Ազգային ժողովների վաւերացումով, կարող է լինել համապետական ընտրութիւնների ներգրաւելով», - ըսած է Մեֆիլեանը:

Հայաստանի Կառավարութիւնը Սկսած է Ամուլսարի Ոսկիի Հանքի Շրջակայ Միջավայրի Կրայ Ազդեցութեան Անկախ Գնահատումը

Հայաստանի կառավարութիւնը սկսած է «Ամուլսարի Ոսկիի նախագծի» շրջակայ միջավայրի վրայ ազդեցութեան անկախ գնահատումը: Այդ մասին յայտնած է Lydian International Limited ընկերութիւնը:

2018 թուականի Սեպտեմբերին Հայաստանի կառավարութիւնը յանձնարարած էր գնահատել Ամուլսարի ոսկիի հանքի հնարաւոր հետեւանքները ջրային պաշարներու վրայ: Այժմ այդ աշխատանքներուն կ'աւելնան նաեւ «Շրջակայ միջավայրի եւ սոցիալական ոլորտի վրայ ընկերութեան ազդեցութեան գնահատումը»:

Գնահատումը կը կատարէ Earth Link Advanced Resources Development ընկերութիւնը: Կ'ակնկալուի, որ այն կը տեւէ 12-16 շաբաթ: Ընթացիկ տարուայ Փետրուարին Հայաստանի կառավարութիւնը յատկացուցած էր 396,900 տոլար գնահատուման ծախսերուն համար:

Հայաստանի բնապահպանական կազմակերպութիւնները ամիսներէ ի վեր փակ կը պահեն դէպի հանք ճանապարհը եւ կը պահանջեն կառավարութեան վերջնականապէս դադարեցնել հանքի շահագործումը՝ միջավայրի վրայ անոր ունեցած աղետալի հետեւանքներուն պատճառաւ:

ԼՈՒՐԵՐ

BBC. Հայաստանի մեջ «Թաւշեայ Յեղափոխութիւնը» Ծանր Դրութեան Մէջ Դրած Է Պաքուն

Հայաստանի մէջ «Թաւշեայ յեղափոխութիւնը» եւ իշխանափոխութիւնը ծանր դրութեան մէջ դրած է Պաքուն, ուր ամենաքիչը կը սպասէին իշխանափոխութիւն հարեւան երկրին մէջ:

Ինչպէս կը գրէ BBC-ին, Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ առաջինը ըլլալու մրցակցութիւնը եւ Արեւմուտքի աչքին «կարեւոր գործընկերը» դերակատարութիւնը նախկինի պէս կարեւոր գործօն է Հարաւային Կովկասի երկիրներու քաղաքականութեան մէջ:

«Եթէ նախապէս Ատրպէյճանը ինքզինք կը համարէր Հարաւային Կովկասի մէջ առաջատար՝ Արեւմուտքի անվտանգութեան շահերու (առաջին հերթին նաւթային եւ հաղորդակցային) մատակարարման տեսանկիւնէ, ապա այժմ նաւթի համաշխարհային շուկային մէջ իրավիճակի փոփոխութեան պատճառով ջերմութիւնը ոլորտին մէջ նախագիծերը կորսնցուցեր են կարեւորութիւնը:

Սա կը նշանակէ, որ արտաքին գործօններու նշանակութիւնը իշխանութեան օրինականութեան առումով թուլացած է, եւ երկրի առաջնորդը ստիպուած է դիմելու հասարակութեան՝ իր իշխանութիւնը ամրապնդելու համար: Ներքին աջակցութիւնը կարեւոր է Ատրպէյճանի համար նաեւ անոր համար, որ այն ուղղակիորէն կ'անդրադառնայ երկրի անվտանգութեան ամենակարեւոր խնդրի՝ Ղարաբաղեան հակամարտութեան լուծման գործընթացին վրայ:

Միաժամանակ Ռուսաստանի (ինչպէս նաեւ Իրանի) ընկալումը՝ որպէս հզօր տարածաշրջանային տէրութիւն, թուլացած է միջազգային պատժամիջոցներու ճնշման տակ: Այս ամէնը կը ստիպէ Ալիււին երկրի ներսը տիրող իրավիճակին աւելի մեծ ուշադրութիւն դարձնել, քան անցեալին: Բայց որքա՞ն հեռու կրնայ ան երթալ իր բարեփոխումներուն մէջ», - ըսուած է յօդուածին մէջ:

Ատրպէյճանը 2018-ին Սօս 300 Միլիոն Տոլարով Աւելցուցած Է Ռազմական Ծախսերը

Ատրպէյճանը նախորդ տարի մօտ 300 միլիոն տոլարով աւելցուցած է պաշտպանական ոլորտի ծախսերը, խորհրդարանէն ներս յայտարարած է վարչապետ Նովրուզ Մամետովը՝ անցած տարուան պիւտձէի կատարողականը ներկայացնելու ժամանակ: Ըստ այդմ, 2018-ին Ատրպէյճանը ռազմական ոլորտին յատկացուցած է շուրջ 2 միլիար տոլար:

«Զինուած ուժերը արդի գի-

նամթերքով ապահովելու նպատակով ձեռք բերուած է «Փոլոնեզ», «Լորա» համակարգեր, հակապաշտպանութեան միջոցներ», - յայտարարած է Մամետովը:

Ատրպէյճանի վարչապետի խօսքով, տեղական ընկերութիւնները անցած տարի շուրջ 150 հազար տոլարի պաշտպանական նշանակութեան արտադրանք տուած են, 70 հազար տոլարի ալ՝ արտահանած:

Կեանքի Որակով Երեւանը Պաքուն Եւ Թիֆլիսէն Առաջ Է



Mercer միջազգային խորհրդատուական ընկերութիւնը հրատարակած է աշխարհի քաղաքներու վարկանիշը ըստ կեանքի որակի: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնբրես»-ը, վարկանիշին մէջ Հայաստանի մայրաքաղաք Երեւանը առաջ անցած է Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսէն եւ Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքունէն:

Վարկանիշին մէջ Երեւանը գրաւած է 170-րդ հորիզոնականը: Թիֆլիսը 187-րդ հորիզոնականին վրայ է, իսկ Պաքուն՝ 195: Հայաստանի հարաւային հարեւան Իրանի մայրաքաղաք Թեհրանը 199-րդ հորիզոնականին է:


Վարկանիշը կը գլխաւորէ Աւստրիոյ մայրաքաղաք Վիեննան, երկրորդ հորիզոնականին Զուրիքը:

Յիւրիի քաղաքն է, երրորդին՝ Գանատայի Վանքուվըր քաղաքը: Տասնեակին մէջ են նաեւ Միւնխենը, Օքլանտը, Տիւրքմենքանդը, Ֆրանքֆուրթը, Քոփենհագենը, Ժնեւը եւ Պազէյը:

Կեանքի որակով վատագոյն քաղաքը Իրաքի մայրաքաղաք Պաղատանն է:

Վարկանիշը կազմելու համար Mercer միջազգային խորհրդատուական ընկերութեան մասնագէտները հաշուի առած են բնակութեան պայմանները, սպառողական ապրանքներու առկայութիւնը, հասարակական փոխադրամիջոցը, ընկերային վիճակը, գուարճանքներու առկայութիւնը, կրթութիւնը, բնական պայմաններն ու տնտեսութեան վիճակը:

Փաշինեանը Լայչակին Ներկայացուցած Է Ղարաբաղեան Գործընթացի Առնչութեամբ Երեւանի Սկզբունքային Դիրքորոշումը



Փաշինեան ԵԱԿԿ գործող նախագահ Սիրոսլաւ Լայչակի հետ հանդիպման ժամանակ

Հայաստանը կը կարեւորէ ԵԱՀԿ-ի դերակատարութիւնը տարածաշրջանին մէջ անվտանգութեան ապահովման, մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ կայուն զարգացման խթանման գործին մէջ, նշած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը ԵԱՀԿ գործող նախագահ, Սլովաքիոյ արտաքին գործոց նախարար Միրոսլաւ Լայչակի հետ հանդիպման ժամանակ:

Վարչապետը ընդգծած է, որ Հայաստանը պատրաստ է աջակցելու կառուցիչ մէջ Սլովաքիոյ նախագահութեան առաջնահերթութիւններու առաջ մղման: Փաշինեանը յոյս յայտնած է, որ ԵԱՀԿ-ի հետ աշխոյժ գործակցութիւնը պիտի նպաստէ կառավարութեան բարեփոխումներու օրակարգի արդիւնաւէտ իրականացման եւ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման:

Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վար-

չութեան փոխանցմամբ՝ հանդիպման մասնակիցները քննարկած են ԵԱՀԿ օրակարգային շարք մը հարցեր՝ ընդգծելով կազմակերպութեան առջեւ ծառայած մարտահրաւէրները միասնական ջանքերով դիմագրաւելու անհրաժեշտութիւնը:

ԵԱՀԿ գործող նախագահը ընդունած են նաեւ Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը եւ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը:

Սարգսեանը Լայչակի հետ հանդիպման ժամանակ մասնաւորապէս կարեւորած է ԵԱՀԿ-ի գործունէութիւնը եւ դերակատարումը ոչ միայն որպէս ԼՂ հիմնախնդրի կարգաւորմամբ զբաղող հիմնական կառույց, այլ նաեւ որպէս երկխօսութեան, վստահութեան եւ համագործակցութեան միջոցով համապարփակ անվտանգութիւնը առաջ մղող հարթակ, ըսուած է նախագահականի հաղորդագրութեան մէջ:

Թուրքիան Խիստ Ձեւով Արծագանգած Է Եւրոխորհրդարանի Ընդունած Ձեկոյցին

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը արձագանգած է 13 Մարտին Եւրոխորհրդարանի մէջ Թուրքիոյ վերաբերեալ ընդունուած գեկոյցին, որուն մէջ Եւրոմիութեանը կոչ կ'ըլլայ դադարեցնել անդամակցութեան բանակցութիւնները Անգարայի հետ:

Արտաքին գործոց նախարարութեան տարածած յայտարարութեան մէջ Եւրոխորհրդարանի որոշումը միակողմանի ու ոչ առարկայական դիրքորոշում որակուած է:

«Նշեալ խորհրդատուական բնուէթի որոշումը մեզի համար ոչինչ կը նշանակէ», - նշուած է յայտարարութեան մէջ եւ աւելցուած, որ 751 տեղանոց Եւրոխորհրդարանին մէջ 370 կողմ ձայնով այդ որոշման ընդունումը ցոյց կու տայ, որ այն չէ ստացած բոլորի աջակցութիւնը:

«Մեր երկրին մէջ իրականացուելիք Տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններու շեմին, Թուրքիոյ ու Եւրոմիութեան միջեւ 4 տարուան ընդմիջումէն ետք իրականացուելիք Համագործակցութեան խորհուրդի նիստէն առաջ նման կողմնակալ ու անարդար գնահատականներ պարունակող գեկոյցի ընդունումը կը հակասէ Եւրոպայի



ընտրական մշակոյթին:

Եւրոմիութեան անդամակցութիւնը Թուրքիոյ համար ռազմավարական նշանակութիւն ունի: Մեր յարաբերութիւններու առանցքը հանդիսացող անդամակցութեան բանակցութիւնները առկախելու կոչը ցոյց կու տայ Եւրոխորհրդարանի տեսլականի սնանկութիւնը ու անյարգալից վերաբերմունքը Պաքիստանի Սուրիոյ Սերուանտ սկզբունքին (լատ.՝ Pacta Sunt Servanda - պայմանագիրները պէտք է պահպանուին), - ըսուած է յայտարարութեան մէջ:

Յայտարարութեան մէջ անհանգստութիւն արտայայտուած է նաեւ Թուրքիոյ վերաբերեալ Եւրոխորհրդարանի գեկոյցին մէջ Հայոց ցեղասպանութեան մասին յիշատակման համար:

Իտալիոյ Լացիո Մարզը Ընդունած է Հայոց Ցեղասպանութիւնը Ծանցող Բանաձեւ



Իտալիոյ Լացիո շրջանի տարածաշրջանային խորհուրդը, 18 մարտին, Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի յարգման օրէն մօտ մէկ ամիս առաջ, միաձայն ընդունած է խորհուրդի անդամ Սերժիօ Փիրոցիի առաջարկութիւնը՝ ճանչնալ Հայոց ցեղասպանութեան պատմական վաւերութիւնը: Այս մասին կը տեղեկանանք Իտալիոյ Հայ համայնքի կայքէջէն:

Բանաձեւի ընդունմամբ, խորհուրդ արանի անդամները

գորակցութիւն եւ աջակցութիւն կը յայտնեն Հայ ազգի գաւազնակներուն, անոնց պատմական ճշմարտութեան համար մղած պայքարին ու մարդու իրաւունքներու պաշտպանութեան ի սպաս յանձնառումին:

Այսպիսով, Լացիոն դարձած է 136-րդ խորհուրդը, որ ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը: Հոռոմի հայկական համայնքը երախտագիտութիւն յայտնած է Լացիոյ շրջանային խորհուրդին, որ այս քայլով կանգնած է ճշմարտութեան կողմը:

Եթէ Պարուն եւ Երեւանը Պայմանաւորուին

Շարունակուած էջ 1-էն

Խնդրի պատրուակով Ատրպէյճանի սահմանապահ ուժերը կը շարունակեն արգելել «այն քաղաքացիներու մոտքը երկիր, որոնք հայ ազգին պատկանելութեան ուղղակի կամ անուղղակի յատկանիշներ ունին», բացատրելով սա այն հանգամանքով, թէ անհնար է ապահովել նման անձերու անվտանգութիւնը:

Ռուսական կողմի դիմումները, որ անթոյլատրելի են ազգային պատկանելութեան հողի վրայ խտրական դրսեւորումները Ռուսաստանի Դաշնութեան քաղաքացիներու նկատմամբ, ատրպէյճանական կողմէն կ'անտեսուին, ըսուած է Ռուսաստանի արտաքին

քաղաքական գերատեսչութեան հաղորդագրութեան մէջ:

«Պաքու» ամսագիրը հարցազրոյց հրատարակած է «Ինչ, ո՞ւր, ե՞րբ» հեռուստատեսողութիւնը յայտնի անդամ Ռոմվան Ասքերովի հետ, որ ըսած է, թէ ըլլալով Ռուսաստանի քաղաքացի, բայց ատրպէյճանցի՝ ան չի կրնար ազատ ալցել Հայաստան: Զախարովան յիշատակած է այս հարցազրոյցը եւ ըսած, թէ ոչ իրեն, ոչ ալ Ռուսաստանի ԱԳՆ-ին յայտնի են դէպքեր, երբ նման բան տեղի ունեցած է, եւ կոչ ըրած է, խնդրած է յայտնել դէպքերու մասին, երբ Ռուսաստանի քաղաքացիները արտաքսած են Երեւանի օդակայանէն անոնց ատրպէյճանական ծագման պատճառով:

Զէնքերուն Վրայ Հայերէն Գրութիւններ

Շարունակուած էջ 1-էն

դէն արձագանգած է տեղեկութեան՝ նշելով, որ կը համագործակցի գործընկերներու հետ, որպէսզի մանրամասներ պարզէ Նոր Զելանտայի մէջ ահաբեկչութենէն ետք ձերբակալուած անձերու եւ գրաւուած գէնքերու վերաբերեալ:

Վրացերէն գրուած են Դաւիթ Աղմաշենեպէլի թագաւորի եւ Թամար թագուհիի ամուսինի՝ արաններու արքայորդի Դաւիթ Սոսլանի անունները: Ռուսերէն գրուած է՝ «Ճակատամարտ Քարկուլի մօտ 1770» (ռուս-թրքական պատերազմ), «Ճակատամարտ Պոլսի մօտ 1913»: Քատրերէն կ'երեւայ, որ պահուանակներուն վրայ իսլամներու դէմ քրիստոնեաներու կողմէ

տարբեր ժամանակներու տարուած յաղթանակներու ժամանակագրութիւն պատկերուած է:

Գրուած է նաեւ Միլոշ Օպիլիչ (սերպ ազգային հերոս, որ Քոսովոյի դաշտի ճակատամարտին սպաննած է սուլթան Մուրատ առաջինը), 1683 թուականի Վիեննայի ճակատամարտը, որ վերջակէտ դրաւ Օսմանեան կայսրութեան յառաջխաղացման:

Հայերէն գրուած է Սարիդամիչի ճակատամարտ (Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին ռուսական եւ օսմանեան կայսրութիւններու ամենամեծ ռազմական բախումներէն է: Ընթացած է 22 Դեկտեմբեր 1914-էն մինչեւ 17 Յունուար 1915-ը, աւարտած է ռուսերու յաղթանակով):

«Հաշուեյարդար» Բառապաշար Գոյութիւն Զուցի

Շարունակուած էջ 1-էն

թիւնի քայլի ձեռքբերման ուղղութեամբ: Միեւնոյն ժամանակ, ռազմաարդիւնաբերութեան ոլորտում կառուցուած քայլին եւ բովանդակային փոփոխութիւն ենք իրականացնում:

«Հայաստանը պէտք է արհեստագիտութեամբ զարգացած երկիր լինի եւ մենք այդ ուղղութեամբ ենք գնում»:

ՀԱՊԿ, ԵԱՏՄ

«Այս կազմակերպութիւններու նկատմամբ իմ յարգանքը եւ վերաբերմունքն էականօրէն բարձրացել է: Այս կառուցներում տեղի են ունենում բովանդակային, շահագրգիռ, երբեմն էլ նոյնիսկ բուռն քննարկումներ:

«Կարեւորում ենք մեր նախագահութիւնը ԵԱՏՄ-ում, յոյս ունենք, որ կազմակերպութեան արդիւնաւէտութեան մակարդակը կը բարձրանայ:

«Ունենք 8 տասնեակ խոչընդոտներ, որոնց յաղթահարման համար ամէն ինչ պէտք է անենք»:

Դատական համակարգի մասին

«Ես հարիւր տոկոսով չեմ կարող ասել, որ այսօր դատական համակարգում կաշառք չկայ: Մենք խնդիր ունենք մեր դատական համակարգը բերել եւրոպական չափանիշի: Դատաւորները ընկերային երաշխիքներին ուղղուած քայլեր են արուել, մշակուած են նոր օրէնքներ, քննարկումներ են գնում դատական համակարգի բեռնաթափման մասին: Մենք պէտք է գնանք մինչեւ վերջ եւ ունենանք իրապէս անկախ դատական համակարգ»:

«Կառավարութեան դէմ սեւ քարոզչութիւն կայ»

«Օրական միլիոնաւոր տոլարներ են ծախսուած կառավարութեան դէմ սեւ հակաքարոզչութիւն անելու համար: Կառավարութիւնը դրա դէմ ոչ մի գործողութիւն չի ձեռնարկում, որովհետեւ մեզ համար խօսքի ազատութիւնը բացարձակ արժէք է:

«Այդ շրջանակները պէտք է հասկանան, որ իրենք ՀՀ քաղաքացիները շրջանում աջակցութիւն չեն կարող ունենալ»:

«Սահմանադրական փոփոխութեան անհրաժեշտութիւն չկայ»

«Սահմանադրութիւնը կենդանի օրկանիք է եւ կարող է փոխուել: Սակայն, մենք այսօր կառավարման համակարգը փոխելու անհրաժեշտութիւն չենք տեսնում, քանի դեռ յստակ փաստարկներ չկան, թէ ինչու պէտք է դա անենք»:

«Դժգոհութեան ալիք չկայ»

«Հայաստանում հասունացող դժգոհութեան ալիք չկայ: 24 տարի ասում էին՝ ժողովրդի մտայնութիւնը վատն է, ժողովուրդը սիրում է կաշառք վերցնել: Բայց ինչպէ՞ս ստացուեց, որ նախորդ տարուայ ընտրութիւնները այժմ միջազգային հարթակներում որպէս օրինակ են բերում: Եթէ այսօր ընտրութիւններ տեղի ունենան, ես վստահ եմ, որ «Իմ քայլը» դաշինքը կը յաղթի, գուցէ՝ աւելի բարձր ցուցանիշներով:

«Անկախ Հայաստանում երբեք քաղաքական վիճակն այսքան կայուն չի եղել, ժողովրդավարապէս կայուն, ոչ թէ ռեփրեսիւ (ճնշողական) կայուն»:

«Կան մարդիկ, որոնք յեղափոխութիւնից յետոյ աւելի

լաւ չեն ապրում»

«Այո, Հայաստանում կան մարդիկ, որոնք յեղափոխութիւնից յետոյ աւելի լաւ չեն ապրում: Բայց հարցն այն է՝ կա՞ն մարդիկ, որ աւելի վատ են ապրում: 2018-ի Սեպտեմբերին խօսուած էր հաւանական գնաճի մասին: Մենք կարողացանք յստակ գործողութիւններով գնաճը զսպել: Երկրում ամենակարեւոր փոփոխութիւնն այն է, որ այլեւս չկայ էլիթա, որ ասում է՝ եկէք բրինձ բաժանենք, կարտոֆիլ բաժանենք:

Մենք ասում ենք՝ մենք չենք թալանելու ու չենք բաժանելու, մենք հնարաւորութիւններ ենք ընձեռելու, մենք պէտք է անենք ամէն ինչ, որպէսզի մարդիկ աշխատեն»:

«Զախողումներ չենք ունեցել»

«Մեր պետական կառավարման համակարգում չկայ որեւէ պաշտօնեայ, որը ձախողել է, ուրիշ բան է, որ արագութեան խնդիր կայ:

«Կաշկանդուած չեմ ասել «ցտեսութիւն» յեղափոխական պաշտօնեաներին:

«Կան թերութիւններ եւ բացթողումներ: Մեր հիմնական խնդիրը մեր որակը բարձրացնելն է»:

«Գոհ եմ պարգեւավճարային սքանտալից»

«Շատ խնդիրներ են եղել: Ամէն սքանտալից յետոյ, պաշտօնեան աւելի պատասխանատու է դառնում, քան որ նորը գայ եւ ամէն ինչ նորից սկսի:

«Ես գոհ եմ պարգեւավճարային սքանտալից, քանի որ նման քննարկում պէտք է ունենայինք: Պետական կառավարման համակարգում պէտք է աշխատավարձերը լինեն պատշաճ՝ հանրութեանը լաւագոյնս ծառայելու համար»:

«Իմ ընտանիքն իր կարգավիճակը երբեք չի չարաշահելու»

«Իմ ընտանիքը եղել է իմ կողքին, երբ եղել եմ գործազուրկ եւ ապրել եմ ծայրայեղ ծանր պայմաններում, երբ իմ դէմ ահաբեկում էր իրականացուած, երբ բանտում էի եւ երբ ոչ բազմամարդ հանրահաւաքներ էի իրականացնում»:

«Ակնկալիքն այն է, որ ես հիմա իմ ընտանիքից հրաժարուե՞մ: Ինձ համար իմ ընտանիքը շատ կարեւոր է:

«Մենք մեր կարգավիճակը երբեք չենք չարաշահելու: Մենք ծոխութիւններ չենք ունեցել եւ չենք սիրել: Այնպէս չէ, որ կառավարական առանձնատունը մեզ հանդուր է պատճառում:

«Զեմ պատկերացնում, որ ես գնամ Ղարաբաղ եւ այնտեղ ծառայող իմ տղայի մօրը եւ քոյրերին իմ հետ չտանեմ»:

«Տարբերութիւն չկայ ում եմ պատկանում սրճարանները»

«Այնպէս չէ, որ ինձ բերել են քարտէզ, ու ես խաչ եմ քաշել հենց Միքայէլ Մինասեանին պատկանող սրճարանների վրայ: Այդտեղ իրաւական ձեւակերպումների խնդիր կայ:

«Ես գիտեմ, որ սրճարանների մի մասի դէպքում քաղաքապետարանը կարողացել է միակողմանի լուծել պայմանագրերը, որոշ դէպքերում հնարաւոր է դատական գործընթաց սկսել:

«Ինձ համար բացարձակ տարբերութիւն չկայ՝ ում են պատկանում սրճարանները: Անգամ եթէ իմ հարազատ եղբօրը պատկանէին, ոչինչ չէր փոխուելու»:

Տեղի Ունեցաւ Պոլսոյ Պատրիարք Մեսրոպ Արք. Սուրբաֆեանի Յուզարկաւորութիւնը

Հոգեւոր եւ աշխարհիկ շարք մը բարձրաստիճան պաշտօնեաներու, հազարաւոր մարդոց մասնակցութեամբ Պոլսոյ մէջ հանդիսաւոր կերպով վերջին հրաժեշտը տուին Պոլսոյ Հայոց 84-րդ պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաֆեանին:

Վաղ առաւօտէն Գուճապիուի Սուրբ Աստուածածին աթոռանիստ մայր եկեղեցւոյ մէջ մեկնարկած է պատրիարքի վերջին օծման արարողութիւնը, որուն ներկայ եղած են Հայ առաքելական եկեղեցւոյ չորս նուիրապետական թեմերու ներկայացուցիչները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատուիրակութեան կազմին մէջ եղած են Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ եւ Վատիկանի մէջ Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլճեանը եւ Մայր Աթոռի դիւանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը:

Անթիլիասէն ժամանած էին Լիբանանի թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոս Ալեմէզեանը, Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան դիւանապետ Խորեն եպիսկոպոս Աշքարեանը:

Պոլսոյ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը արտասանած է դամբանականը, Սահակ եպիսկոպոս Մաշալեանը ընթերցած է շնորհակալական ցուցակը, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանը եկեղեցւոյ խորանի մօտ կատարած է վախճանեալ Մեսրոպ պատրիարքի վերջին օծումը:

Հոգեհանգիստի արարողութեան ներկայ եղած են Հայ կաթողիկ համայնքի ղեկավար Լեւոն արքեպիսկոպոս Զէքեանը, Հայ աւե-



տարանական եկեղեցւոյ առաջնորդ Գրիգոր Աղապալօղլուն, ինչպէս նաեւ ասորական, կաթողիկ, ուղղափառ եկեղեցիներու ներկայացուցիչ հոգեւորականներ:

Եկեղեցի եկած էին նաեւ թրքական մէճլիսի հայազգի պատգամաւորներ Կարօ Փայլանը, Մարգար

Եսայեանը, նախկին պատգամաւոր Սեփիա Տողանը, համայնքային կառուցներու ղեկավարներ, հասարակական գործիչներ:

Հանգուցեալ պատրիարքի տիրամօր՝ Մարի Սուրբաֆեանին եւ պոլսահայ համայնքին ցաւակցելու եկած էին շարք մը բարձրաստիճան

թուրք պաշտօնեաներ՝ Թուրքիոյ նախագահի խօսնակ Իբրահիմ Քալըն, նախկին վարչապետ Պինարի Երլարըմը, «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան խօսնակ Օմէր Չելիքը, Մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարար Մեհմետ Նուրի Էրսոյը, Պոլսոյ նահանգապետ Ալի Եէրլիքեան, քաղաքապետ Մելուք Ուլսալը, Ժողովրդահանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ունալ Չելիքօզը եւ պատգամաւոր Սեզգին Թանըքըլուն:

Նախագահի խօսնակ Իպրահիմ Քալըն, մամուլի ներկայացուցիչներու հետ զրոյցի ժամանակ իր ցաւակցութիւնը յայտնելով պատրիարքի վախճանի կապակցութեամբ, նշած է, որ Մեսրոպ Սուրբաֆեանը իբրեւ հոգեւորական եւ մտաւորական հայրենասէր քաղաքացի էր, որ իր համախմբող մօտեցմամբ կեանքի ողջ ընթացքին կատարեց իր կրօնական պարտականութիւնը:

«Ան կարեւոր ներդրում ունեցաւ, որպէսզի հայերն ու թուրքերը աւելի մօտենան եւ իրար աւելի լաւ հասկնան», - ըսած է Քալըն:

Շուրջ չորս ժամ տեւած կրօնական արարողութենէն ետք պատրիարքի դագաղը դուրս բերուած է մայր եկեղեցիէն եւ դրուած պատրիարքարանի մուտքի առաջ: Ընթերցուած են դամբանախօսութիւններ, հազարաւոր մարդիկ յարգանքի տուրք մատուցելով ճանապարհած են լուսահոգի պատրիարքը, ապա թաղման թափորը ուղեւորուած է դէպի Շիշլիի հայկական գերեզմանատուն: Թաղման արարողակարգէն ետք Պոլսոյ Հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաֆեանը հողին լանձնուած է գերեզմանատան պատրիարքներու համար առանձնացուած հատուածին մէջ:

Հայ Մանկաբարձ-Կնոջաբանը Աննախադէպ Վիրահատութիւն Կատարած Է Մոսկուայի

Մարտ 6-ին առաջին անգամ Ռուսաստանի մէջ՝ Վ. Ի. Գուլաքովի անուան մանկաբարձութեան եւ կնոջաբանութեան ազգային գիտահետազոտական կեդրոնին մէջ, ՌԴ առողջապահութեան եւ ընկերային զարգացման նախարարութեան գլխաւոր մանկաբարձ-կնոջաբան, ակադեմիկոս Լէյլա Ադամեան 36-ամեայ կնոջ վերարտադրողական կարողութեան վերականգնման եզակի վիրահատութիւն կատարած է: Հիւանդին մօտ առկայ եղած է ձուարաններու վաղաժամ անբաւարարութիւն:



«Հայերն ալսօր»-ը, յղում կատարելով Գուլաքովի անուան Մանկաբարձութեան եւ կնոջաբանութեան ազգային գիտահետազոտական կեդրոնի մամուլի ծառայութեան, կը յայտնէ, որ վիրահատական միջամտութիւնն իրականաց-

ուած է ճափոնական մեթոտի համաձայն, որ կիրառութեան մէջ դրուած է 2010 թուականէն եւ փորձարկուած է աշխարհի 5 երկրի՝ Սպանիոյ, Լեհաստանի, Չինաստանի, Մեքսիկայի եւ Ճափոնի մէջ:

Նման վիրահատական միջամտութիւն թոյլ կու տայ 40-45 տարեկան կանանց, որոնց մօտ ձուարաններու վաղաժամ անբաւարարութիւն կը սկսի, ունենալ սեփական երեխաներ:

Առաջին Անգամ Սուրբ Պատարագ Մատուցուած Է Ջուիցերիոյ Նոշատել Քաղաքին Սէջ

Ջուիցերիոյ Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տէր Գուսան Վարդապետ Աճանեան Մարտ 17-ին Նոշատելի հայկական հոգեւոր եւ կրթամշակութային նորաբաց կեդրոնին կից եկեղեցւոյ մէջ առաջին անգամ Սբ. Պատարագ մատուցած է:



Ինչպէս կը հաղորդէ «Հայերն Ալսօր»-ը, պատարագին մասնակցած են համայնքի անդամները եւ կեդրոնի հիմնադիրները:

Հոգեշնորհ Հայր Սուրբն իր քարոզին մէջ ներկաներուն պատգամած է նմանօրինակ նախաձեռնութիւնները յաճախակի դարձնել, միշտ հաւատարիմ մնալ քրիստոնէական մեր հաւատքին, հոգեւոր եւ մշակութային արժէքներուն: Պատարագի աւարտին բոլորը միասնաբար աղօթած են, որմէ յետոյ տեղի ունեցած է հիւրասիրութիւն: Այսուհետ Պատարագ կը մատուցուի իւրաքանչիւր ամսուայ երրորդ կիրակի օրը: Նոյն օրը կայացած են նաեւ

պարի հերթական եւ հայերէնի առաջին դասընթացները:

Աւելցնենք, որ Նոշատելի հայկական կեդրոնի նպատակը, որ բացուած է փետրուար 10-ին հայ աշխոյժ երիտասարդներու նախաձեռնութեամբ, հոգեւոր արժէքներու, հայոց լեզուի եւ գրականութեան, հայ ժողովուրդի պատմութեան, հայ աւանդական պարերու, երգ-երաժշտութեան ուսուցման, պահպանման ու տարածման միջոցով տեղի հայ զաւակներուն հայցի կրթութիւն եւ դաստիարակութիւն տալն ու հայապահպանութիւնն է, ինչպէս նաեւ Ջուիցերիոյ հայկական համայնքի տարածաշրջանի անդամներուն համախմբելը:

Մեծարանքի ճաշկերոյթ Նուիրուած Վեր. Դոկտ. Վահան Թուրքիեանի
(Իր Կրօնա-Մշակութային Գործունէութեան 60-Ամեակին Առթիւ)



Հայ Աւետարանական Համայնքի ժամանակակից պատմութեան մեծագոյն դէմքերէն՝ Վերապատուելի Դոկտ. Վահան Թուրքիեանի հովուական եւ կրօնա-մշակութային ու գրական գործունէութեան 60-ամեակը՝ բացառիկ շուքով նշուեցաւ անցեալ Կիրակի, Մարտ 17, 2019 Փասատինայի Կիլիկիա Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Տէրեան սրահին մէջ:

Աւելի քան 300 Հանդիսականներ բերնէ բերան լեցուցած էին սրահը: Բոլորն ալ եկած էին իրենց սէրն ու յարգանքը ցուցաբերել անձի մը, որ իր բովանդակ կեանքը նուիրաբերած էր արդիւնաբեր հարուստ ծառայութեան մը, ի սպաս Աստուծոյ, հայ ասպարհն ու մեր փառապանծ մշակոյթին:

«Փառք եւ պատիւ» խմբերգի յոտնկայս երգի երգեցողութենէն ետք սեղաններու օրհնութիւնը կատարեց Փասատինայի Հայ Աւետ. Կիլիկիա Եկեղեցւոյ ժրջան հովիւ Վեր. Սերոբ Մկրտիչեան:

Ճաշի սպասարկութենէն ետք գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Մեծարեալ Վեր. Դոկտ. Վահան Թուրքիեանի ծառայական կեանքի նշանակալից ներդրումներուն մասին անդրադառնալէ ետք Վեր. Սերոբ Մկրտիչեան ջերմօրէն ողջունեց ներկայ հասարակութիւնը:

Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան վարիչ Վեր. Վաչէ Էքմէքճեան եւ Վեր. Դոկտ. Ռօն Թովմասեան իրենց սրտի խօսքերով դրուատեցին մեծարեալի բարեմասնութիւնները, որպէս տաննակ տարիներու բազմաբնոյթ կառուցներու անխոնջ ծառայող մը, որուն կեանքը եղած է համակ նուիրում եւ անվատ

աշխատանք ի սպաս Աստուծոյ, եկեղեցիին եւ հայ մշակոյթին:

Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան էջմիածին գմբուէլուն պատճառաւ իր ողջոյնի գրութիւնը փոխանցեց Արթ. Տ. Մարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեան, որուն մէջ կը շեշտուէր Տիրոջ ծառայելու ուրախութիւնը: Իսկ Մուշեղ Արք. Մարտիրոսանի ներկայացուիչ Արթ. Տ. Գարեգին Քհնյ. Պետրեան իր բարեմաղթութիւններուն մէջ շեշտեց որ Վեր. Վահան Թուրքիեան կոչում ունեցող հոգեւորական էր:

Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան նախագահ Տօքթ. Նազարէթ Տարագճեան իր ելոյթին մէջ շեշտեց որ Դոկտ. Վեր. Վահան Թուրքիեան Քեսապէն մինչեւ տարբեր ցամաքամասերու մէջ, ունեցաւ համաշխարհային մակարդակով ներդրումներ: Ան հեղինակ է 42 գիրքերու եւ այժմ պատրաստելու վրայ է ԱՀԱԼ-ի (AMAA) պատմութիւնը:

Ողջոյնի ելոյթներով հանդէս եկան Տիկին Ճոյս Փիլիպոսեան (Ստեփան Փիլիպոսեան հիմնարկի ատենապետուհի), ինչպէս նաեւ ընտանիքի անդամներէն Մայքլ Ոսկեան եւ Ճորճ Բամպակեան:

The Armenian Observer շաբաթաթերթի խմբագիր եւ հրատարակիչ Օշին Քէշիշեան իւրապատուկ ելոյթով մը շնորհաւորեց օրուան մեծարեալը, զինք որակաւորելով որպէս «պատուելի, պատմաբան եւ պատմող» եւ նշեց որ կարգացած է Վեր. Վ. Թուրքիեանի հեղինակած 42 գիրքերը: Ողջոյնի խօսքով հանէս եկաւ նաեւ Քեսապի Ուսումնասիրաց

Շար.ը էջ 19

Մեծարանքի Երեկոյ ի Պատիւ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանի

ԽԱՉԻԿ ԵԱՆՈՅԵԱՆ

Կիրակի, Մարտ 24, 2019, երեկոյեան ժամը 6:00-ին Պոլսահայերու միութեան կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ մեծարանքի և գնահատանքի արդար ձեռնարկ մը, ի պատիւ՝ Լոս Անճելոսի հայութեան երկարամեայ ծառայողներէն, և մանաւանդ՝ Պոլսահայերու ամբողջանուէր անդամներէն Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին:

Ձեռնարկը կազմակերպուած է մեր գաղութէն ներս իր բազմաբեղուն ծառայութիւններով հանրածանօթ Պոլսահայերու միութեան կողմէ:

Այդ օր իրենց ներկայութեամբ ձեռնարկը և մեծարեալը պիտի պատուեն հայ ժողովուրդի բարեկամ՝ Դոկտ. Թանէր Աքչամ և վերջերս Հայաստան հաստատուած, ֆրանսահայ ծանօթ մտաւորական՝ Ռաֆֆի Հերմոն Արաքսը, ինչպէս նաեւ գաղութի մտաւորականներու և ազգային գործիչներու հոյլ մը:

Գրել Տոքթ. Յովհաննէս Աւետիքեանի ծառայութիւններուն մասին, կը նշանակէ գրել յետ եղեռնեան սերունդին մասին, այն գործիչներու և ազգայիններու մասին, որոնք վերջին 70-100 տարիներուն Պոլսոյ և Թուրքիոյ մէջ գործող կամ գոյութիւն ունեցող հայ եկեղեցիներու, դպրոցներու և մշակութային կեանքին տէր ու պահպանողներն են: Այդ սերունդը իր կեանքը վտանգելով, կործարելով թուրք ազգայնամոլ իշխանութիւններուն և պաշտպան եղաւ մեր ժառանգութեանց և հաստատութեանց: Անոնցմէ մին է Տոքթ. Աւետիքեան, որ իր եռանդուն գործունէութեամբ Պոլսոյ մէջ դպրոցներու, եկեղեցիներու, երգչախումբերու և մշակութային հաստատութիւններու կեանք և աւել տուած է իր ողջ կեանքի ընթացքին:

Նկատի ունենալով Ազգային-Եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքների ծաւալը եւ ժամանակատարութիւնը, ինչպէս նաեւ Մայր Տաճարի վերանորոգման ընթացքը՝ Գերագոյն Հոգեւոր խորհուրդը Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ որոշեց Ազգային-Եկեղեցական ժողով գումարել 2020 թ. նոյեմբերի 1-8-ը: Մայր Տաճարի նորոգութեան պատճառով նպատակաշարմար նկատուեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան 20-ամեակին նուիրուած հանդիսութիւնները եւս անցկացնել առաջիկայ տարի:

Վերադառնալով ընթացքում անդրադարձ կատարուեց Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններին, տեղեկացուեց ՀՀ վարչապետի հրամանով ստեղծուած աշխատանքային խմբի մասին, որի նպատակն է առաւել զօրացնել Եկեղեցի-պետութիւն գործակցութիւնը ի նպաստ երկրի հզօրացման: Գոհունակութեամբ լսելով զեկոյցը՝ ԳՀԽ անդամները կարեւորեցին պետութեան հետ գործակցութիւնը եւ յաջողութիւններ մղթեցին նորակազմ աշխատանքային խմբի աշխատանքներին:


Գերագոյն Հոգեւոր խորհուրդը զեկոյց լսեց Հայոց Եկեղեցու գործառնութիւնների բարեխաւման ծրագրի ընթացքի վերաբերեալ, որը համակարգուած է «Դաւիդեան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասոյ Դաւիդեանի կողմից: Տեղեկութիւններ տրուեցին կատարուած աշխատանքի եւ առաջիկայ անելիքների մասին: Վերջում Վեհափառ Հայրապետը Գերագոյն Հոգեւոր խորհրդի անունից գնահատանք յայտնեց համակարգող խմբին իրենց ջանադիր ծառայութեան համար:

Կոմիտաս Վարդապետի եւ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակներին նուիրուած միջոցառումների ծրագիր-առաջարկ ներկայացրեց յոբելեաններին նուիրուած միջոցառումների կազմակերպման յանձնախմբի ատենապետ Գերաշնորհ Տ. Անուշաւան եպիսկոպոս Ժամկոչեանը: Քննարկումների արդիւնքում Գերագոյն Հոգեւոր խորհուրդը որոշեց տարուայ կտրուածքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ թեմերում կազմակերպել լիշատակի արարողութիւններ եւ հոգեւոր-մշակութային, գիտակրթական, գեղարուեստական, ճանաչողական միջոցառումներ:

Մայր Տաճարի նորոգութեան պատճառով նպատակաշարմար նկատուեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան 20-ամեակին նուիրուած հանդիսութիւնները եւս անցկացնել առաջիկայ տարի: Ժողովի ընթացքում անդրադարձ կատարուեց Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններին, տեղեկացուեց ՀՀ վարչապետի հրամանով ստեղծուած աշխատանքային խմբի մասին, որի նպատակն է առաւել զօրացնել Եկեղեցի-պետութիւն գործակցութիւնը ի նպաստ երկրի հզօրացման: Գոհունակութեամբ լսելով զեկոյցը՝ ԳՀԽ անդամները կարեւորեցին պետութեան հետ գործակցութիւնը եւ յաջողութիւններ մղթեցին նորակազմ աշխատանքային խմբի աշխատանքներին:


Գերագոյն Հոգեւոր խորհուրդը զեկոյց լսեց Հայոց Եկեղեցու գործառնութիւնների բարեխաւման ծրագրի ընթացքի վերաբերեալ, որը համակարգուած է «Դաւիդեան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասոյ Դաւիդեանի կողմից: Տեղեկութիւններ տրուեցին կատարուած աշխատանքի եւ առաջիկայ անելիքների մասին: Վերջում Վեհափառ Հայրապետը Գերագոյն Հոգեւոր խորհրդի անունից գնահատանք յայտնեց համակարգող խմբին իրենց ջանադիր ծառայութեան համար:

Շար.ը էջ 19



ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ


Կազմակերպութեամբ եւ մասնակցութեամբ՝
Պոլսահայ Միութեան, Իրանահայ Միութեան,
Իրաքահայ Ընտանեկան Միութեան
եւ Վարդանանց Ասպետներու



Փրօֆ. ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ հետ Պատմաբան եւ Ընկերաբան

Դասախօսութեան նիւթ՝
**ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԿԵՐԿԵՐԵԱՆ
«ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԹՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՑՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ»**

Շաբաթ, Մարտ 23, 2019, երեկոյեան ժամը 7:00ին
Իրանահայ Միութեան մէջ 117 S Louise St, Glendale, CA 91205



Մուտքը Ազատ

Հիրասիրտիւն

LECTURE NIGHT

With Prof. TANER AKCAM
Historian and Sociologist

Organized by
Organization of Istanbul Armenians, the Armenian Society of LA
Iraqi Family Association, and Knights of Vartan


SATURDAY, March 23, 2019 at 7:00 P.M.
At The Armenian Society Center
117 S Louise St, Glendale, CA 91205

Lecture about
**ARAM ANDONIAN AND KRIKOR GUERGUERIAN
"NEW EVIDENCES ON ARMENIAN GENOCIDE AND TURKISH DENIALISM"**

Admission free

Reception

Նոր Հրատարակութիւն Արեւմտեան Թեմէն «33 Հատընտիր Երկասիրութիւնք» Դոկտ. Ջաւէն Ա. Քհնյ. Արզումանեան Պըրպենք, 2019



Այս շաբթու Ամերիկայի Հայոց Արեւմտեան Թեմի հրատարակչութեան լոյս տեսաւ երկրեզու ծաւալուն հատոր մը, 345 էջ, հեղինակութեամբ Տ. Ջաւէն Ա. Քհնյ Արզումանեանի, ուր ընդգրկուած են 33 այժմէական նիւթեր բովանդակող ուսումնասիրութիւններ: Գիրքը կը բացուի Առաջնորդ Սրբազան Գերանորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի գնահատագիրով, ուր կ'ըսուի թէ «Ձեր այս հրատարակութիւնը անտարակոյս սերունդներու հոգին ու միտքը պիտի լուսաւորէ, որպէսզի իրենց մէջ ամրագրեն ճշմարտութիւններ, որոնք պիտի դառնան երաշխիքը առաւել պայծառ արշալոյսներու»:

Հատորը երեք բաժիններով կը գատորոշէ կատարուած աշխատանքը - Նուիրապետական, Միսակա, Պատմագիտական-փոխնի փոխ անգլերէն եւ հայերէն լեզուներով եւ լուսանկարներով, ընդամենը 66 գրութիւններ, ոմանք կարդացուած իբրեւ բանաստեղծութիւններ, եւ ուրիշներ որպէս գրախօսականներ: Առաջին բաժինն մէջ նուիրապետական բարձրաստիճան ութ ժամանակակից հոգեւորականներու դրուատիքը կ'ընծայուի պատմական խորքով, գլխաւորութեամբ Հռոմի ներկայ Քահանայապետ Ֆրանսիսկոս Պապին՝ իր Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Երզնկայի վերաբերմամբ:

Երկրորդ մասին մէջ հայ եկեղեցւոյ պաշտամունքին յատուկ երեւոյթներն ու անոնց նկատմամբ հայեցակէտեր կը պարզաբանուին, պատմագիտական եւ աստուածաբանական տուեալներով, յատկապէս պաշտամունքի լեզուի գործածութիւնը եւ Պատարագի անադարտ եւ գրաբար մատուցումը: Մասնաւոր գրութեամբ մը Հայ եկեղեցւոյ շարականներուն բովանդակութիւնը եւ անոնց հեղինակներուն հազարամեայ պատմական ընթացքը ճշգրտուած է:

Երրորդ բաժինը պատմագիտական նիւթեր կը շոշափէ ուր քննուած են յարանուանական մօտեցումներ եւ Մայր Աթոռի դիրքը անոնց նկատմամբ: Հնագոյն նիւթը Համշէնի գաղթավայրին կը վերաբերի զոր մեզի կը հաղորդէ Արաբաց արշաւանքի 8-րդ դարու ժամանակակից հայ պատմիչ՝ Ղեւոնդ Վարդապետ,

որու մասին մերօրեայ գրութիւններ կը վրիպին գաղթողներու ճշգրիտ թուականն ու աղբիւրը անգիտանալով: Նոյն բանին մէջ արձագանք գտած են հայոց ցեղասպանութեան առնչութեամբ արձագանք հայ հոգեւորականներու մէկ կարեւոր մասին նահատակութիւնները:

Կարեւոր անդրադարձ մը կայ նաեւ վերապրող արձագանքներուն անմնացորդ եւ հերոսական աշխատանքի մասին՝ վերակերտելու յետ-եղեռնեան Հայ եկեղեցին սփիւռքի մէջ: Հայ կաթողիկէ պատրիարքութեան, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան անցեալ հարիւրամեակին եւ ներկայ օրերու յատուկ գրութիւններ կը պարզեն վերջին ժամանակներու անակնկալ պարագաները:

Սոյն հրատարակութեան ազնիւ մեկենասն է, ինչպէս յաճախ, Տիրար Նազարէթ Գեւորեան որ գիրքը կը ձօնէ հայ նահատակ հոգեւորականաց:

Լոյս տեսած է Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) թրքագիտութեան ամպոնի դասախօս, բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ ՀՀԻ (Հայագիտական հետազոտութիւններու հիմնարկ) հայ-օսմանական առնչութիւններու բաժնի ղեկավար Լուսինէ Սահակեանի «Համշէնը հայկական ձեռագրերում» մենագրութիւնը (363 էջ, 120 էջ գունաւոր ներդիր, Համշէնի գաւառի 15-17-րդ դարերու քարտէզ):

Ինչպէս կը հաղորդէ «Հայերն այսօր»-ը, գիրքը հրատարակուած է ԵՊՀ գիտական խորհուրդի երաշխաւորմամբ: Սոյն ուսումնասիրութիւնը կատարուած է ԵՊՀ Հայագիտական հետազոտութիւններու հիմնարկի եւ ՀՀ Գիտութեան կոմիտէի «Գիտական եւ գիտատեխնիկական գործունէութեան պայմանագրային (թեմատիկ) ֆինանսաւորման» ծիրէն ներս:

Մենագրութեան մէջ (363 էջ, 120 էջ գունաւոր ներդիր, Համշէնի գաւառի 15-17-րդ դարերու քարտէզ) առաջին անգամ ի մի բերուած են XV-XVII դդ. Համշէնի մէջ ընդօրինակուած քսան ձեռագիր մատեան, որոնք կը պահուին Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ, Վենետիկ եւ Վիեննայի Մխիթարեան, Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի ձեռագրատուններուն մէջ, Լոնտոնի Բրիտանական թանգարանի եւ Ֆիլադելֆիոյ «Ազատ» գրադարաններուն մէջ: Հեղինակը պատմաբանասիրական քննութեան ենթարկած է ձեռագիրներուն մէջ համշէնցի գրիչներու ձգած յիշատակարանները, որոնք բացառիկ եւ արժէքաւոր տեղեկութիւններ կը յայտնեն հայոց Համշէն գաւառի պատմութեան, իշխանութեան, ժողովրդագրութեան, տեղանուններու եւ անձնանուններու, ժողովրդական հաւատալիքներու, լեզուավիճակի, բնակչութեան զբաղմունքի վերաբերեալ: Այս մատեաններն աներկբայ կը հաստատեն,



որ Համշէնը եղած է հայոց հոգեւոր թեմերէն մէկը եւ կարեւոր սրբատեղի, ուր ամփոփուած են Սուրբ Վարդանանց աճիւնները, պահուած Քրիստոսի վարչամակը եւ Սուրբ Նշանները: Մենագրութիւնը ցոյց կու տայ, որ Համշէնը եղած է հայ գրչութեան ուրոյն կեդրոն, ուր ստեղծուած մանրանկարներով եւ զարդանախշերով ծաղկած այս բարձրարժէք ձեռագիրները հայոց մշակութային գանձարանի անգնահատելի գոհարներէն են: Ուսումնասիրութեան մէջ առաջին անգամ համեմատական քննութեան ենթարկուած են նաեւ Պոլսոյ Վարչապետական Գլխաւոր արխիւին մէջ պահուող Համշէնի՝ XVI-XVII դարերու օսմանեան աշխարհագիր մատեանները:

Գիրքին մէջ տեղ գտած են գունաւոր լուսապատմէններ՝ ձեռագիրներու համապատասխան էջերէ եւ նկարներ՝ Համշէնի բնաշխարհէն: Առաջին անգամ կը ներկայացուի նաեւ Համշէնի գաւառի՝ XV-XVII դարերու մանրամասն քարտէզ, որ կազմուած է Լ. Սահակեանի տեղագրական ճշգրտման հիման վրայ:

Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

Հայ Թատրոն 2019 ընտրովի դասարանի աշակերտները կը ներկայացնեն

Հինգշաբթի, 28 Մարտ 2019-ին Ուրբաթ, 29 Մարտ 2019-ին Երեկոյեան ժամը 8:00-ին

Աշակերտական ցերեկոյթ Հինգշաբթի, 28 Մարտ 2019-ին կ.ա. ժամը 11-ին

«Ակամայ Բժիշկը» կատակերգութիւն Հեղինակ՝ Մոլիէր

Մուտքի ցուէր \$10

Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Համալիք 2495 E. Mountain St. Pasadena, CA 91104 Phone: (626) 794-0363

Յետմահու Զրոյց Փայլակ Ահարոնեանին Զեռ

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Ճիշդ եւ ճիշդ երկու ամիս առաջ հեռացար մեզմէ սիրելի բարեկամս, հեռացար երկրային կեանքէն՝ միանալու համար երկնային թագաւորութեան մէջ յաւերժական կեանքին արժանի բոլոր մը հայ մեծերու մեծաթիւ խումբին: Մեր, ինչպէս կ'ըսեն, հարիւր տարուան բարեկամութեան սիրոյն, պիտի խնդրեմ, որ ազատ աթոռ մը պահես ինծի համար, որպէսզի ես ալ երբ ատենը գայ՝ մասնակից դառնամ Տիրոջ կողմէ ընտրեալ-ներու ուղղուած յորդորները մտիկ ընելու:

Զաւակիդ՝ Արային կողմէ գրուած կենսագրականէդ ինծի համար բազմաթիւ նորու-թիւն-ներ երեւան ելան, որոնց մասին երբեք չես խօսած: Ըստ իս՝ աններելի համեստութիւն: Մեր հանդիպումներու ընթացքին միայն կատակախառն երկխօսութիւն-ներով կը լըմըննար մեր գրոյցը: Բնաւ չէիր մոռնալ յիշեցնել՝ «Հենրիկ գրէ, շատ գրէ, նոր գիրքդ ալ չմոռնաս դրկել...»:

Մահէդ երկու-երեք շաբաթ առաջ, «Նոր օր» շաբաթաթերթի տարեկան մտերմիկ հաւաքին, հագիւ կրցար հեռուէն քանի մը սանթիմ ձեռքդ բարձրացնել սեղանին վրայէն՝ զիս ողջունելու համար: Ինծի համար դժուար չէր հասկնալ, որ դուն այն փայլակը չես: Նուաղուն հայեացքդ աւելի քան ծօտուն էր: Զարգուչակ միտքերը պարուրեցին զիս՝ «Չըլլա՞ք, որ գէշ բան մը պատահի, - անցաւ միտքէս»: Հեռուէն մօտեցայ քեզ ողջագուրուելու, բայց դուն տեղէդ չհարժեցար: Հաւանաբար դժուար էր քեզի համար տեղէդ շարժիլը: Ես կռնակէդ գրկեցի քեզի եւ ականջիդ փսփոսցի, - Ի՞նչ կայ փայլակ, անհանգի՞ստ ես...: Դուն՝ կամ չլսեցիր եւ կամ ալ չլսելու տուիր, միայն պահանջկոտ, աղոտ ձայնով ըսիր, - Ի՞նչ եղան գիրքերդ, ինչո՞ւ չես դրկէր...:

- Շատեր խօսեցան այդ օր, բայց քեզի խօսք չտուին: Զեղած երեւոյթ: Վստահաբար երեկոյն կազմակերպողները մօտէն գիտէին քու առողջութեանդ մասին: Հիւրասիրութեան սեղանին ալ չմոտեցար: Մինչեւ երեկոյի աւարտը, հիւրի կարգավիճակով, լուռ ու մունջ հետեւեցար ուրիշներու գործողութիւններուն:

Արդէն աւտոմեքենայիս մէջ, ամփոփելով հաճելի երեկոյի անցուղարձը, կուրացնող, անփոփ պատկեր մը յառնեցաւ աչքերուս առջեւ. Դուն էիր սիրելիդ իմ փայլակ: Ես հասկցայ, որ այդ երեկոյ մենք վերջին անգամն է, որ կը տեսնայինք զիրար՝ օտար, բայց մեզի համար աւելի կամ պակաս չափով ջերմացած հողին վրայ: Ափսո՞ս, հազար ափսոս՝ ես չէի սխալած:

Զաւակիդ՝ ներհուն մտաւորական, գաղափարապաշտ հայրենասէր Արայի գրութիւնը իսկական հանրագիտարանային լայնածաւալ յղուած է: Բազմաթիւ տարեթիւներու, իրադարձութիւններու, քանի մը տասնեակ մարդոց, մտաւորականագրագէտորոններու անուններու ցանկին ընդմէջէն, փայլակ ջան, տղադ աւելի քան մանրակրկիտ կերպով թուարկած է երկրային կեանքէդ այնպիսի մանրամասնութիւններ, որոնք նորութիւն են ինծի եւ, վստահաբար՝ շատ-շատե-



րու համար ալ: Ինծի համար տղադ նոր աշխարհ մը բացաւ քու կեանքէդ: Եւ ես, միամիտս, բնաւ տեղեակ չեմ եղած գործիչնակ, որ դուն ֆուլթպոլիստ եղած ես, նոյնիսկ ճանչուած:

- Ծօ, տղա՛, ինչո՞ւ երբեք չես խօսած քու բազմաթիւ նուիրագործումներուդ, քանի մը տասնեակ պարգեւներու, մետալներու, կառավարական շքանշաններու մա-

սին, չէ՞ որ մենք բառասուն երկար ու ձիգ տարիներու բարեկամներ եղած ենք:

Այս աստիճանի համեստութիւնն ալ քիչ մը պախարակելի է: Քեզի համար ալ նորութիւնն է, որ շատեր, փառամոլութեամբ տառապողներ, գրաւած են ողջ դիմա-տետրը եւ այս օրերուն գիշեր ու գոր դիմատետրի էջեր կը լեցնեն իրենց արգահատելի պատկերներով եւ նոյնքան տափակ գրութիւններով:

Եղեռնէն ճողոպրած ծնողքդ ո՞ւր կէ գիտցան, որ դուն ողջ կեանքիդ մէջ, 70 տարի անընդմէջ, հաւատաւոր կուսացականի, եռանդուն ուսուչապետի եւ հասարակական գործչի հանգամանքով պիտի փայլիս հայ կեանքին ներս, որ անունդ փայլակ դրին: Զարմանալի՞, ապշեցուցիչ՞ Փայլա՛կ, Փայլատու, փայլ տուող: Իրաւ ալ, դուն ոչ միայն փայլ եղար, այլեւ փայլ տուիր ամէն մէկ գործի, որ քո նախաձեռնութեամբ էր, եւ կամ ալ այլոց առաջարկութեամբ ու վերին Մարմնի թելադրանքով:

Հասարակական, կուսակցական երկարատեւ գործունէութիւնդ կանգ առաւ հազիւ մէկ-մէկուկէս տարի առաջ, երբ անդենական աշխարհ


դրկեցինք անմասն կնոջդ՝ Տիկին Մարիին, որուն մշտատեւ ժպիտը եւ խնդումներն մօտեցումը ունէ անձի՝ այսօր ալ թարմ է յիշողութեանս մէջ:

Սովորաբար, կեանքի փորձառութիւնէն գիտեմ փայլակ ջան, երբ առաջ կինը կը մահանայ, ամուսինը երկար չ'ըսարի, մանաւանդ՝ երկար տարիներու ամուսնական գոյգի պարագային, ինչպիսին, որ ձերինն էր՝ 66 տարի, դիւրին է ըսելը... Հոգ մի ընէր բարեկամս, մենք դեռ քով-քովի պիտի գանք:

Լաւագոյն մխիթարութիւնը՝ ժառանգներդ են եղբայր պատուական, որոնցմէ հաւատաւոր կուսակցական եւ հասարակական գործիչ Արան՝ ահա թէ ինչ գրած է ան կենսագրականիդ մէջ:

«Քառասուն օրեր արդէն սահած են այն օրէն, երբ երախտաւորը (փայլակ Ահարոնեան, - ՀԵՆ.Ա) յաւիտեան իր աչքերը փակեց եօթնասուն տարիներու ազգային ու կրթական, նուիրեալ ու անսակարգ ծառայութեան վաստակ մը ձգելով իր ետին: Այս տողերուն հեղինակին համար այդ վաստակը իր թան


Շար.ը էջ 17



ՄԵՃԱՐԱՆՔԻ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Ի պատիւ

Պոլսահայ Միութեան



Յկեանս Պատուոյ Անդամ

Յոգաբարձու եւ Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝

ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՒԼԱԿ ԱՎԵՏԻՔԵԱՆԻ

իր 40ամեայ ծառայութեանց առթիւ, հանդէպ Միութեան եւ 50 տարիներու ներկայացուցած գործունէութիւններուն, անանձնասեր նուիրումին եւ օրինակելի ծառայութեանց առթիւ, հանդէպ Յայ Ժողովուրդին եւ Ազգին

Կիրակի, Մարտ 24, 2019, երեկոյեան ժամը 6:00ին


Պոլսահայ Միութեան մէջ 19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Մեծարեալը պիտի ներկայացնեն

Փրօֆ. ԹԱՆԵՐ ԱՔՉԱՍ

ՊԱՏՄԱԲԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԲԱՆ

Եւ Պոլսոյ մէջ Տոքթ. Աւետիքեանի աշակերտ՝ Աթիլիսթ՝ Ռաֆֆի Հերմոն Արաքս



ԳԵՂԱՐՈՒԲԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Մուտքը Ազատ Հիւրասիրութիւն

PROGRAM IN HONOR OF

LifeTime Honorary Member, OIA Trustee and Cultural Committee Chairman


Dr. OHANNES KULAK AVEDIKYAN

For his 40 years of support and devotion towards OIA and 50 years of activism, exemplary service and dedication towards the Armenian People and Nation.

Sunday, March 24, 2019 at 6:00 P.M.

At OIA Center
19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Dr. Ohannes Kulak Avedikyan will be presented by




Prof. Taner Akcam


Historian and sociologist

And Dr. Avedikyan's student in Istanbul, Activist Raffi Hermon Araks

FREE ADMISSION



program



Հայկական Բլուր «Մենք հոս գործ ունինք ընելու»



ՊՈՎՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Պետրոս Ալթունեանը ծնած է Շուսի, Պուլկարիա: Անոր մեծ ծնողքը եկած են Կայսերիային: Ան հոգեւոր եւ ձեռնադրեալ հովիւ է Հայ աւետարանական եկեղեցիին մէջ եւ միեւնոյն ժամանակ ստանձնած է նոյն համայնքի համայնքապետի պատասխանատու պաշտօնը: Պուլկարիոյ մէջ կը գործեն չորս հայ աւետարանական եկեղեցիներ:

Պետրոս ապրած է Պուլկարիոյ համայնավար վարչակարգի օրերը, ուր իր կեանքը այդքան ալ «դիւրին» չէ եղած այդ ժամանակահատուածի ընթացքին:

«Մեր օրերուն եկեղեցական առաքելութիւնը բաւական դժուար էր», ըսաւ Պետրոս: Բայց ան դիմադրած է բոլոր մարտահրաւիրները, քանի որ հաւատացած է առաքելութեան: «Հայրս ալ հոգե-

թեան համար: Իսկ Պետրոսի հաւատքը: «Մեր հայ ազգը մեծ հարստութիւն մը ունի, որ Աստուածաշունչն է», - ըսաւ Պետրոս: Աստուածաշունչը եւ անոր մէջի ապրող հաւատքը մեզ կենդանի պահած են մինչեւ այսօր: Պէտք է շարունակենք տարածել զայն մեր ժողովուրդին մէջ»:

Պետրոս կը խօսի հայերէն: «Բայց կը ցաւիմ, որ զրկուեցայ սորվելէ հայերէնի բառապաշարի հարստութիւնը: Մեր օրերուն շատ դժուար էր ազգային լեզու եւ պատմութիւն իւրացնելը», ըսաւ ան:

Պուլկարիա այսօր մաս կը կազմէ Եւրոպական միութեան: Բայց կար մէջս հետաքրքրական զգացում, որ շատ զգուշաւոր ձեւով փորձեցի բաժնեկցիլ տեղացիներուն հետ իմ կեցութեանս ընթացքին: Կրնայի տեսնել, թէ Պուլկարիա, այսպէս



ւոր-եկեղեցական գործի մէջ էր», - շարունակեց Պետրոս: - Յիսունական տարիներուն հայրս առիթը ունեցած է Պուլկարիային դուրս գալու եւ Ամերիկա մեկնելու: Բայց ան մերժած է: Իսկ հօրը մերժեւրը... «Մենք հոս գործ ունինք ընելու»:

Եւ այս «գործը» այսօր Պետրոս պահած է որպէս իր հօրմէ աւանդ: Ան այսօր կը շարունակէ հաւատքով աշխատիլ իր երկրին ու անոր մէջ ապրող հայ իրականու-

ւած, «անուանական» ձեւով անցած է համայնավար վարչակարգէն դէպի Եւրոպական Միութիւնը: Շատ մը ձեւերով տակաւին կը զգաս, որ երկիրը պահած է իր անցեալի դիմագիծը... Պուլկարիա հինգ հարիւր տարի մնացած է օսմանեան տիրապետութեան տակ եւ այդ ժամանակաշրջանը առիթ է տուած, որ երկիրը բարգաւաճի՝ ըստ պատշաճի: Պետրոսը չուշացաւ կիսելու իմ ստացած տպաւորութիւնը: «Պուլկարացիները միշտ ալ երախտա-

պարտ մնացած են, որ Ռուսիա զիրենք ազատած է օսմանեան տիրապետութենէն», - ըսաւ Պետրոս: - Նմանութիւններ կան պուլկարերէնի եւ ռուսերէնի միջեւ՝ որպէս սլաւոնական լեզուներ: Եւ այս իմաստով երկիրը կը մնայ այդ անցեալի խորհրդային-ռուսական շուքին, բայց նաեւ՝ երախտագիտական միջնորդին տակ»:

Սոֆիա՝ Պուլկարիոյ մայրաքաղաքը ունի հազար ու քիչ մը աւելի հաշուող հայութիւն: Բայց հայութեան կարեւոր մէկ մասնիկը կեդրոնացած է Փլովտիւ, որ երեւի կը հաշուէ մօտաւորապէս վեց հազար հայ:

Փլովտիւրը ունի մշակութային մեծ եւ հին պատմութիւն: Ան այս տարի հուշակուած է Եւրոպայի մշակութի մայրաքաղաք: Բայց Փլովտիւրը ունի իւրաքանչիւր աշխարհագրական տարածք. քաղաքը կազմուած է

հայուն մշակոյթով եւ ազգային «արժանապատուութեան» պահպանման համար: Հայը ոչ միայն իր անձին փրկութեան մասին մտածած է Յեղասպանութեան եւ տեղահանութեան օրերուն, այլ նաեւ՝ իր մշակութային արժէքներուն: Այս ի՞նչ քաջութիւն եւ անձնագոհողութիւն, որ անոնք այս բոլորը բերած են իրենց հետ մինչեւ... Փլովտիւ: Բերած են, որպէսզի հայը շարունակէ ապրիլ... Ապրիլ իր ինքնութեան եւ մշակութի հարազատութեան մէջ: «Այս ամբողջ հարստութիւնը պահուած մնացած է համայնավար վարչակարգի օրերուն», ըսաւ տէր Հրաչ: «Հայ ժողովուրդի քրիստոնէական պետական կրօն հուշակման հազար եօթը հարիւրամեակի տօնակատարութիւններուն առիթով էր, որ դուրս հանուեցաւ եւ կազմակերպուեցաւ այս թանգարանը», ըսաւ ան:



վեց բլուրներէ, որոնցմէն մին կը կոչուի Հայկական բլուր: Հոն, ուր հայեր համախմբուած են ու կ'ապրին մինչեւ այսօր, եւ ուր նաեւ կան՝ Սուրբ Գէորգ հայկական եկեղեցին, հայկական վարժարանը, մշակութային կեդրոնը, խաչքար ու տակաւին... Վերջապէս, Հայկական բլուրը փոքր Հայաստան մըն է... Փլովտիւի մէջ:

Տէր Հրաչը հոգեւոր հովիւն է Սուրբ Գէորգ եկեղեցիին: «Աստուծոյ ծառայ ըլլալը պատիւ է», տէր հայրն է խօսողը: Կը զրուցէի երիտասարդ կղերականի մը հետ, որ եկած է Հայաստանէն: Անոր աչքերուն մէջ կրնայի տեսնել նուիրում՝ իր հաւատքին ու ծառայութեան նկատմամբ: «Պատարագը ամբողջութեամբ հայերէնով է», ըսաւ ան: Բայց տէր Հրաչ չի բաւականանար միայն պատարագի արարողութեամբ:

«Պատարագէն ետք ժողովուրդը կը հաւաքեմ քովի սրահը՝ հաղորդակցութեան համար, բայց նաեւ՝ հոգեւոր, եկեղեցական եւ ազգային այլ նիւթերու սերտողութեան համար», ըսաւ տէր Հրաչ:

Հայը գոյապայքարի ընթացքին պէտք ունի յաւելել միջոցառումներու եւ գոհողութեանդ: Տէր Հրաչ ապրող մէկ լաւ օրինակն է այդ գոհողութեան...

Բայց այս գոհողութիւնը ան ժառանգած է իր եկեղեցւոյ պատմութենէն: Տէր Հրաչին հետ շրջագայեցայ եկեղեցւոյ թանգարանի տարբեր բաժինները, բոլոր մասունք-սրբութիւնները, գորս հայեր տեղահանութենէն ետք իրենց հետ «չալկած» եւ բերած են Փլովտիւ... «Ռոտոյթոյն եւ Մարկալային հայեր տեղահանուած են եւ հասած՝ Փլովտիւ», ըսաւ տէր Հրաչ: «Բայց անոնք իրենց հետ նաեւ բերած են իրենց ազգային սրբութիւններն ու հարստութիւններն: Դիտելով այդ բոլոր ցուցադրուած եկեղեցական-պատմական իրերը՝ կը սքանչանաս

Փլովտիւի այս թանգարանը հինգերորդ տեղը կը գրաւէ աշխարհի հայկական եկեղեցական բոլոր թանգարաններուն մէջ՝ իր հաւաքածոյի հարստութեամբ:

Եւ կային իմ մտորումներս: Իսկ մենք այսօր... Հասպա՞ վաղը... Պիտի կարենա՞ք պահել այս ամբողջ հարստութիւնը... Ժառանգը... ոչ միայն ֆիզիքական իմաստով... այլ՝ անոնց հոգին... ինքնութիւնը...: Ու տակաւին՝ այն քաջութիւնը եւ գոհաբերութիւնը, որ մեր մեծ ծնողները ստանձնեցին, որպէսզի մենք ապրինք... «Տոն Քրիշտին նման պայքար կը մղենք», ըսաւ Սիմոն Թիւթեյեանը՝ Ազգային Վիքթորիա եւ Գրիգոր Թիւթեյեան վարժարանի տնօրէնը: Ասիկա միակ հայկական վարժարանն է Պուլկարիոյ մէջ: Երկու հարիւր ութսուն աշակերտ ունեցող այս վարժարանը շաբաթը միայն չորս ժամ հայերէն կը դասաւանդէ: Չկայ հայոց պատմութեան, կրօնի ու քրիստոնէական դաստիարակութեան դասապահ:

«Աշակերտները դպրոցի բակին մէջ արդէն պուլկարերէն կը խօսին իրարու հետ», - ըսաւ Սիմոն: - Այս ձեւով լեզու մը չենք կրնար պահել»: Սիմոնի հետ մեր զրոյցը մէկ-մէկ կ'անցնէր յուսահատական միջնորդներէ, որոնցմէ մէկը. «Բոլոր յոյսերը թող անցեալին անցնին»: Բայց այս բոլորին մէջէն չուշացաւ նաեւ վճռականութիւնը: «Ես իմ ճակատագիրս ունիմ եւ պիտի շարունակեմ»:

«Վահան» շաբաթաթերթը հիմնուած է 1991 թուականին: Սահակ Չալճեանը իմ բազմազան կազմի անդամներէն մէկն է: Տան դաստիարակութիւնը մեծ եղած է, ուր ան հայերէնին լաւ տիրապետած է: «Ազգային կեանքը մարդը կը դաստիարակէ», - ըսաւ Սահակ: Բայց կարեւոր է, որ հետեւիս կարգ ու

Գիտնականները Պարզած են, Թե Ինչու Խելացի Մարդիկ Կը Նախընտրեն Միմակ Մնալ

Գիտնականները հետազոտութիւնները ցոյց տուած են, որ խելացի մարդիկ կը նախընտրեն միմակ մնալ: Այս ամէնուն պատճառները գտնելու համար պէտք է լինէր, որ ինչպէս մեր նախնիները կը լուծէին իրենց խնդիրները:

Դարեր առաջ մարդիկ միասին կը փորձէին լուծել խնդիրները: «Մէկ գլուխը լաւ է, երկուքը՝ աւելի լաւ» ասացուածքը շատ լաւ կը նկարագրէ իրավիճակը. շատ գլուխները կը նշանակէին շատ գաղափարներ, իսկ համատեղ աշխատանքը միշտ ալ կը դիւրացնէր գործը: Արհեստագիտութիւններու անընդհատ զարգացման իբրեւ արդիւնք՝ այս դարձուածքը այսօր արդիական է: Եթէ որոշած էք որեւէ բան ընել ու ամբողջովին կը հաւատաք ձեր ուսմանը, ուստի, անկասկած, կը գտնէք նպատակին հասնելու ուղին: Դրական մտածողութիւնը (զուգորդուած դրական գործելով) միշտ ալ կ'օգնէ հասնելու այն ամէնուն, որ կ'ուզէք: Իսկ բացասական միտքերը կը ծնին նոր բացասական մտքեր:

Որոշ մարդոց համար միայնակ ըլլալը, այսինքն՝ բացասական միտքերէն ազատուիլն ու դրական միջավայրի մէջ աշխատիլը, նպատակին հասնելու լաւագոյն միջոցն է:

- Խնդիրներ լուծելը աւելի դիւրին կը դառնայ

Եղափոխութեան իբրեւ արդիւնք՝ զարգացած է ինքնուրոյն որոշում կայացնելու մեր բնածին ունակութիւնը: Եթէ նախապէս խոսքով աշխատիլը ձեռնտու էր, հիմա, սակայն, կը խրախուսուի խնդիրները ինքնուրոյն լուծելը: Կրթական համակարգը զարգացած է: Կը զարգանան նաեւ արհեստագիտութիւնները, եւ մենք ձեռք կը բերենք աւելի շատ միջոցներ:

Բայց այս ամէնը չի նշանակեր, որ աւելի բարդ խնդիրները լուծման համար պէտք է ընկերներէն օգնութիւն խնդրել: Ասիկա պարզապէս կը նշանակէ, որ միայնակ աշխատելով մենք աւելի լաւ կը կեդրոնանանք: Այսինքն՝ «մէկ գլուխը լաւ է, երկուքը՝ աւելի լաւ» ասացուածքի փոխարէն՝ հիմա կ'օգ-

տագործեն «որքան մարդ, այնքան խնդիր» արտայայտութիւնը, քանի որ շատ մարդիկ խառնաշփոթ կ'առաջացնեն եւ կը դանդաղեցնեն խնդրի լուծման գործընթացը:

- Ընկերականացումը կարելոր է Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ խելացի մարդիկ շատ յաճախ կը նախընտրեն միմակ մնալ, բայց նոյն ուսումնասիրութիւնները կը փաստեն, որ այդ մարդիկ աւելի յաճախ կը շփուին: Պարտադիր չէ ընկերներու հետ ամէնօրեայ շփումը, ուղղակի այս մարդիկ կ'ուսումնասիրեն շրջակայ աշխարհը եւ կը փնտռեն նոր ու հետաքրքրական բաներ:

Այնուամենայնիւ, ընկերներու հետ շփումը շատ կարեւոր է:

Եթէ խօսքը կը վերաբերի խնդիրները լուծելուն, ուստի որքան խելացի է մարդը, այնքան մեծ է ինքնուրոյն հարցեր լուծելու ցանկութիւնը:

Բայց պէտք է լինէր, որ խելացի ըլլալը թոյլ չի տար ընդդիմանալու հասարակութեան ու խոսափելու ընկերներէն:

Մարդոց հետ շփումը կ'օգնէ որոշ ժամանակով հեռու մնալու կեանքի լուրջ մարտահրաւէրներէն: Եփումը նաեւ թոյլ կու տայ հանգստանալու եւ վայելելու կեանքը՝ չմտածելով, որ անհրաժեշտ է որոշակի ծրագրերով շարժիլ:

Միայնակ ժամանակ անցընելը բնական է, քանի որ անիկա կ'օգնէ կեդրոնանալու ձեր կեանքի ամենակարեւոր բաներուն վրայ: Պարզապէս չի շեղէք, որ միայնակ մնալը չի նշանակեր միայնակ ըլլալ: Մարդ կրնայ միայնակ ըլլալ անզոյ մարդաշատ սենեակի մէջ: Սորվեցէք սիրել դուք ձեզ եւ յարմարիւ ձեր հոլմեան հետ: Միայն այսպէս պիտի կարենաք խաղաղ ու ներդաշնակ կեանք ունենալ:

Եթէ մինչ այս պահը դուք հագուողէպ կը խմէիք քաքաօ, այժմ արդէն ժամանակն է սրբագրելու այդ սխալը: Այդպիսի օգտակար ու քաղցր ըմպելիքը՝ իր յատկութիւններուն շնորհիւ, ոչ միայն կը պաշտպանէ վարակներէն, այլեւ ուժ կը հաղորդէ:

Եթէ Դուք Յոգնած էք ու Ամենաբարձր Տրամադրութեան Մէջ Չէք Գտնուիր, Ուրեմն Ձեզի Անհրաժեշտ է Քաքաօն

Այս ըմպելիքը ունի այնպիսի նիւթեր, որոնք կը խթանեն ուղեղի ճիշդ աշխատանքը ու կը բարելաւեն յիշողութիւնը, ինչպէս նաեւ կը կարգաւորեն քուլլեսթերոլի մակարդակը:

Քաքաօյի մէջ դուք պիտի գտնէք ածխաջրեր (6-10%), սպիտակուցներ (12-15%), ճարպեր, կենսասանիւթեր, բջիջանիւթ եւ հակաթոյներ:

Քորտիլ միացութիւնը, որ կայ նաեւ քաքաօյի հատիկներուն մէջ, կը նպաստէ մաշկի բջիջներու աշխոյժ աճին, կը լաւացնէ վէրքերը եւ կը կանխէ աւելի վաղ յառաջացած կնճիռները:

Քաքաօյի մէջ գտնուող այլ նիւթ մը՝ էպիգալէինը, ունակ է մարմինը պաշտպանելու բազմաթիւ տհաճ ու կեանքի համար վտանգաւոր հիւսնաբանութիւններէ, ինչպէս սրտի եւ ուղեղի կաթոնածէ, քաղցկեղէ ու շաքարխտէ:

Չորժէ վախճալ աւելորդ ջերմութէ: Թէեւ անիկա քաքաօյի մէջ աւելի շատ է, քան թէյի կամ սուրճի, քաքաօն աւելորդ սանթիմէթեր ու քիլոկրամներ չի նուիրեր ձեզի: Քաքաօյի ոչմեծ հափաբաժինը արագ կը յագեցնէ մարմինը, եւ իբրեւ արդիւնք՝ դուք շատ չէք ուտեր:

Սակայն, այնուամենայնիւ, ճիշդ է քաքաօ խմել օրուան առաջին կիսուն, ատիկա եւս ունի հետաքրքրական պատճառ մը: Քաքաօյի մէջ մեղանի կայ, որ կը կլանէ արեւային ճառագայթները ու կ'օգնէ ձեր մաշկը պաշտպանելու անդամանիշակագոյն ճառագայթներէն ու արեւային ալրուածքներէն:

Ֆիզիքական եւ Հոգեկան Ցաւը

Ըստ հոգեբաններու, ցաւի երկու տեսակ կայ՝ ֆիզիքական եւ հոգեկան: Ցաւը մեզի ազդանշան տուող զգացում մըն է:

Օրինակ, երբ կրակին մօտենանք ցաւը մեզի կ'ազդարարէ, որ աւելի չմօտենանք կամ ակռայի թեթեւ ցաւ մը կ'ազդարարէ, որ ծակ ակռայ մը ունինք, որ պէտք է բուժուի: Հիւսնաբաններ կամ տարբեր տեսակի ցաւերէ տառապողներ կրնան գիտնալ անոր շափը եւ երբեմն անտանելիի հասնելու կարելիութիւնը:

Բարեբախտաբար, ի. դարուն ցաւազերծիչներ բաւական դիւրացուցին մարդոց կեանքը: Կրնաք երեւակայել մարդոց տառապանքը ասկէ 150 եւ աւելի տարիներ առաջ, երբ գիտութիւնը տակաւին չէր հասած ներկայ մակարդակին ու ցաւազերծիչներ չկային: Գործողութիւններ տեղի կ'ունենային առանց ցաւազերծիչի:

Ֆիզիքական ցաւի չդիմանալու պարագաներ կան: Օրինակ, ներկայիս շատ մը անյոյս հիւսնաբաններ կան, որոնք կը խնդրեն բժիշկներէ վերջ տալ իրենց կեանքին: Այս պարագան, որ կը կոչուի բժիշկի օգնութեամբ մահ կամ



Կը ներկայացնենք կասիայով ու մեխակով քաքաօյի շատ համեղ բաղադրատոմս:

Կասիան նոյնպէս շատ օգտակար է: Անիկա կը նպաստէ արեան շրջանառութեան բարելաւման ու կը քիչցնէ մարմնի բորբոքումները, իսկ մեխակը՝ բնական հականերխիչ է ու ցաւազրկող միջոց:

Բաղադրիչները՝ կէս ապուրի դգալ քաքաօյի փոշի, 2 գաւաթ կաթ, 1 թէյի դգալ կասիա, կէս թէյի դգալ մեխակ (փոշի), պլատ - դունց մը աղ:

Պատրաստման եղանակը՝ քաքաօն լեցնել ոչ-մեծ կաթնալի մը մէջ, աւելցնել համեմունքներն ու աղը: Ապա աւելցնել կաթը ու տաքցնել միջակ կրակի վրայ, մինչեւ ըմպելիքը բոլորովին միատարր դառնայ: Ցանկալի է անընդհատ խառնել մինչեւ եռայ ու քիչ մը թանձրանայ: Անուշներ:

Քաքաօ. աստուածներու ըմպելիք: Ահա թէ ինչու կարեւոր է զայն խմել 40-էն ետք

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

euthanasia, աղմուկ բարձրացուցած է, եւ մանաւանդ Եկեղեցին անոր դէմ է: Ըստ Եկեղեցիին, այս տեսակ մահը կը համարուի ինքնասպանութիւն, որ արգիւտուած է: Այս հարցը տակաւին շատ պիտի երկարի, որովհետեւ փիլիսոփայական եւ աստուածաբանական արմատներ ունի:

Հոգեկան ցաւը մեզի կրնայ հասնիլ, երբ մարդիկ մեզ կը դաւաճանեն, երախտամոռ կ'ըլլան, կը կորսնցնենք մեզի շատ մօտ անձ մը: Ըստ կրօնականներու, այսպիսի ցաւը նաեւ պատճառ պէտք է ըլլայ, որ մենք աւելի գօտեպնդուինք, գորանանք: Տարօրինակօրէն, թէեւ այսպիսի ցաւեր հոգեկան մեծ իրարանցում կը ստեղծեն, սակայն ընդհանրապէս արդիւնքը կ'ըլլայ ցաւի դիմացող, աւելի տոկոսն անհատականութիւնն ունեցող անձ մը: Հոս ցաւը կարծէք դպրոց մըն է, որ մեզի կը սորվեցնէ դիմանալ կեանքի բոլոր վերիվայրումներուն: Այս ցաւէն ետք շատ մը մարդիկ կը բարձրանան հոգեկան աւելի բարձր մակարդակի եւ մանրութներով շատ չեն զբաղիր: Ցաւը այստեղ հոգին կրթելու եւ բարձր մակարդակի հասցնելու դպրոց մըն է:

Յետմահու Չրոյց Փայլակ Ահարոնեանին Հետ

Շարունակուած էջ 15-էն

մը հանդիսացաւ ժառանգելու ու անվերապահօրէն ծառայելու անոր դաւանած ազգային գաղափարախօսութեան»:

Հանգիստ ննջէ բարեկամս:

Ինչպէս կ'ըսեն՝ մարդ չի մահանար այնքան ատեն՝ քանի դեռ յիշողներ կան: Իսկ քեզի միշտ պիտի յիշողներ ըլլան: Պիտի յիշեն անմահացող հայրենասիրութեանդ, գաղափարական անկոտորուն կամքիդ եւ լայնախոհութեանդ համար:

«Պահեցէք Ձեր Խոստումները եւ Միշտ Ծիշող Ուտք...»

Բոլորը ոգեշնչելու եղանակներու մասին...

Ապրեցէք այնպէս, ինչպէս կ'ուզէք, այլ ոչ՝ ինչպէս կը պատահի: Կեանքը փոխելու միջոցներ գտէք: Ձգտեցէք պատճառարկութեան, այլ ոչ՝ խարդախութիւններու: Աշխատեցէք յաջողութեան հասնելու, այլ ոչ՝ մրցակցութեան համար: Ականջ դրէք ձեր ներքին ձայնին:

- Քանի մը գաղափար, որոնք պիտի օգնեն ձեզ ոգեշնչելու բոլորը.
- Բնական եղէք ու ազնիւ դուք ձեր հետ:
- Մի հրաժարիք այն մէկէն, զոր կը սիրէք:
- Արտայայտեցէք ձեր հիացումը:
- Եղէք ձեր գործին վարպետը:
- Կեդրոնացէք ձեր բնաւորութեան զարգացման վրայ:
- Անհանգստացէք մարդոց համար:
- Աշխատեցէք մարդոց մէջ արթնցնել անոնց լաւագոյն գիծերը:
- Առաջնորդող եղէք սեփական օրինակով:
- Խօսեցէք այն մասին, ինչի մասին ուրիշները դեռ միայն կը մտածեն:
- Ստիպեցէք մարդոց դրական յոյսեր ունենալ:
- Օգնեցէք մարդոց աւողջանալու:
- Կիսուեցէք յաղթանակներէն ու պարտութիւններէն քաղած դասերով:
- Բարդ իրավիճակներու մէջ պահպանեցէք հանգստութիւնը:
- Կեդրոնացէք դրականի վրայ:
- Պահեցէք ձեր խոստումները եւ միշտ ճիշդը ըսէք:
- Ուշադիր լսեցէք ուրիշ մարդոց:
- Միանշանակ եղէք ու վստահ:
- Հաւատարիմ եղէք անոնց, որոնք կը սիրեն ձեզ:

ՄԱՐԶԱԿԱՆ

Եւրոպա Լիգա. «Արսենալ»-ը Վստահ Յաղթանակ Տօնեց «Ռեն»-ի Նկատմամբ ու Դուրս Եկաւ Քառորդ Եզրափակիչ



«Արսենալ»-ը վստահ յաղթանակ տօնեց «Ռեն»-ի նկատմամբ ու դուրս եկաւ քառորդ եզրափակիչ

Եւրոպա լիգայի 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպման շրջանակում «Արսենալ»-ը սեփական յարկի ներքոյ 3 անպատասխան զնդակ ուղարկեց «Ռեն»-ի դարպասը:

Խաղի հաշիւը 5-րդ րոպէին բացել է Օբամեյնգալը: 10 րոպէ անց իր թիմի առաւելութիւնը կրկնապատկել է Մեյթլենդ-Նայլը: 72-րդ րոպէին Օբամեյնգալն արդէն իր հաշուին դուբլ գրանցեց:

«Չինագործներ»-ի հայազգի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը հանդիպումը սկսեց պահեստայինների նստարանին: Վերջինս 70-րդ րոպէին փոխարինելով Օզիլին դուրս եկաւ խաղադաշտ եւ ակտիւ խաղ ցուցադրեց, իսկ 77-րդ րոպէին արժանացաւ դեղին քարտի:

Այսպիսով, երկու խաղերի արդիւքնում լոնտոնցիները 4:3 հաշուով առաւելութեան են հասնում ֆրանսական կողմի նկատմամբ ու դուրս գալիս քառորդ եզրափակիչ:

Եւրոպա Լիգա. 1/4 Եզրափակչի Վիճակահանութիւն. Յայտնի են Բոլոր Մրցակիցները

Շուեյցարիայի Նիոն քաղաքում կայացաւ Եւրոպա լիգայի 1/4 եզրափակչի վիճակահանութիւնը: Ձեւաւորուեցին հետեւեալ զոյգերը.

«Նապոլի» - «Արսենալ»

«Վիլյառեալ» - «Վալենսիա»

«Բենֆիկա» - «Այնտրախտ»

«Սլավիա» - «Չելսի»

Նշենք, որ եզրափակիչը կը կայանայ Մայիսի 29-ին Պաքուում:

«Չելսի» Պարտուեց «Էվերտոնին»

Անգլիական Պրեմիեր լիգայի 31-րդ տուրում Լոնտոնի «Չելսին» Լիվերպոլում 0:2 հաշուով պարտուեց «Էվերտոնին»: Դաշտի տէրերը 2 կոլերը խփեցին երկրորդ խաղակէստում:

«Չելսին» 7-րդ պարտութիւնը կրեց ընթացիկ առաջնութիւնում եւ 57 միաւորով մնաց 6-րդ տեղում, իսկ «Էվերտոնը» 40 միաւորով 11-րդն է:

«Լիվերպոլը» Բարձրացաւ Առաջին Տեղ

Անգլիական Պրեմիեր լիգայի 31-րդ տուրում «Լիվերպոլը» Լոնտոնում 2:1 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ «Ֆուլհեմին» նկատմամբ: Հիւրերի յաղթական կոլը վերջնամասում խփեց անգլիացի կիսապաշտպան Ջեյմս Միլները, որն անվրէպ իրացրեց 11 մետրանոց հարուածը:

Այս յաղթանակից յետոյ Յուրզէն Կլոպի գլխավորած թիմը շրջանցեց մեկ հանդիպում պակաս անցկացրած «Մանչեսթեր Սիթիին» եւ 76 միաւորով բարձրացավ առաջին տեղ: «Ֆուլհեմը» 17 միաւորով 19-րդն է:

Դորտմունդի «Բորուսիան» Յաղթանակ Կորգեց Աւելացուած Ժամանակում

Գերմանիայի առաջնութեան 26-րդ տուրում երկու առաջատարներէրից Դորտմունդի «Բորուսիան» Բեռլինում մրցեց «Հերտայի» հետ եւ յաղթանակ տարաւ միայն աւելացուած ժամանակում գերմանացի յարձակուող Մարկո Ռոյսի խփած կոլի շնորհիւ՝ 3:2:

«Բորուսիան» 60 միաւորով առաջին տեղում է: «Բաւարիան» 3 միաւոր քիչ ունի, սակայն 25 խաղից յետոյ: «Հերտան» 10-րդ տեղում է՝ 35 միաւոր:

Մեսին Փայլեց, «Բարսելոնայի» Վստահ Յաղթանակը «Բետիսի» Նկատմամբ

Սպանական Պրիմերայի 28-րդ տուրում առաջատար «Բարսելոնան» հիւրընկալուելիս 4:1 հաշուով ուժեղ գտնուեց Սեւիլիայի «Բետիսից», որին առաջին շրջանում պարտուել է 3:4 հաշուով:

«Բարսելոնայից» հեթ-տրիկի հեղինակ դարձաւ արժենթինացի ուճաբարկու Լիոնել Մեսին, մէկ անգամ էլ աչքի ընկաւ ուրուգուայցի յարձակուող Լուիս Սուարեսը:

Մեսին ուճաբարկուների ցուցակը գլխավորում է 28 կոլով, իսկ Սուարեսը կոլերի քանակը հասցրեց 18-ի եւ երկրորդ տեղում է:

66 միաւոր հաւաքած «Բարսելոնան» արդէն 10 միաւոր է գերազանցում երկրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոյին», որն

Անուշ Գրիգորեանը Բոնցքամարտի Եւրոպայի Առաջնութեան՝ Ոսկէ Մետալակիր



Հայաստանի ներկայացուցիչ Անուշ Գրիգորեանը դարձաւ Վլադիկավկազում կայացած բոնցքամարտի Եւրոպայի 18-22 տարեկանների առաջնութեան ոսկէ մետալակիր (ուղիղ եթեր):

51 կգ քաշային կարգի եզրափակիչում հայ մարզուհին մրցեց ուսաստանցի Գելուսիա Գալիեւայի հետ եւ 3 ռաունդում յաղթեց մրցավարների միաձայն որոշմամբ:

Յիշեցնենք, որ 2014-ին Անուշ Գրիգորեանը Պուլյարիայի մայրաքաղաք Սոֆիայում դարձել էր աշխարհի երիտասարդական ախոյեան, իսկ 2015-ին յաղթել էր նաեւ Հունգարիայում կայացած Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում:

Նախօրէին Հայաստանի թիմի կազմում պրոնզէ մետալակիր էին դարձել 60 կգ քաշային Հրայր Շահվերդեանը, 75 կգ քաշային Վախթանգ Յարութիւնեանը եւ գերծանր քաշային Գուրգէն Յովհաննիսեանը, որոնք պարտուել էին կիսաեզրափակիչում:

Լիլիթ Սկրտչեանը Պրոնզէ Մետալի է Արժանացել Երկրորդ Խաղատախտակի Վրայ

Շախմատի կանանց Հայաստանի հաւաքականի երկրորդ համար Լիլիթ Սկրտչեանը Աստանայում աւարտուած աշխարհի թիմային առաջնութիւնում արժանացել է անհատական պրոնզէ մետալի:

Երկրորդ խաղատախտակի վրայ Սկրտչեանը 8 հնարաւորից վաստակել էր 4.5 միաւոր:

Յիշեցնենք, որ կանանց Հայաստանի հաւաքականը 4 միաւորով գրաւել էր 8-րդ տեղը: 9 տուրերում հայ շախմատիստուհիները յաղթել էին Եգիպտոսին, պարտուել Ռուսաստանին, Հնդկաստանին, Չինաստանին, ԱՄՆ-ին, Ուկրաինային, Ղազախստանին եւ ոչ ոքի խաղացել Հունգարիայի ու Վրաստանի հետ:

Ախոյեանի կոչումը ժամանակից շուտ ապահոված Չինաստանի հաւաքականը գրանցեց 100 տոկոսանոց արդիւնք՝ 18 միաւոր: Ռուսները 14 միաւորով գրաւեցին երկրորդ տեղը, իսկ երրորդ տեղը զբաղեցրեց Վրաստանը:

Յիշեցնենք, որ կանանց Հայաստանի հաւաքականն աշխարհի առաջնութեան մասնակցութեան իրաւունքը ստացել է 2018թ. Օլիմպիադայում 6-րդ տեղ գրաւելու շնորհիւ:

Աշխարհի Ամենայայտնի Մարզիկը՝ Ըստ ESPN-ի

ESPN-ն ուսումնասիրութիւն է կատարել, որպէսզի պարզի, թէ ով է աշխարհի ամենայայտնի մարզիկը:

Լաւագոյնին ընտրել են սոցիալական ցանցերում հետեւորդների քանակով, վերջինիս անունը համացանցում փնտրելու քանակով եւ այլ նմանատիպ ցուցանիշներով:

Լաւագոյնի կոչմանն արժանացել է «Եռվենթուս»-ի յարձակուող կրիշտիանու Ռոնալդու: Պորտուգալացին շրջանցել է յայտնի պասթեպոլիստ Լեբրոն Ջեյմսին եւ «Բարսելոնա»-ի աւագ Լիոնել Մեսսիից:

Եւրո-2020. Յունաստան - Հայաստան խաղը՝ Աթենքի «Օլիմպիական» Ստադիոնում

Հաստատուել է Եւրո-2020-ի ընտրական փուլի Յունաստան - Հայաստան հանդիպման անցկացման վայրը, յայտնում է ՀՖՖ մամուլի ծառայութիւնը:

Խաղը տեղի կ'ունենայ Յունիսի 11-ին Աթէնքի «Օլիմպիական» ստադիոնում:

Յիշեցնենք, որ նախքան այդ Հայաստանի թիմը Մարտի 23-ին կը հիւրընկալուի Պոսնիա-Հերցեգովինային, Մարտի 26-ին կ'ընդունի Ֆինլանդիայի թիմին, Յունիսի 8-ին էլ տանը կը մրցի Լիխտենշտեյնի հաւաքականի հետ:

այս տուրում պարտուել էր Բելառուսի «Աթլետիկին»: Երրորդ տեղում գտնուող Մադրիդի «Ռեալն» ունի 54 միաւոր:

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ԺԱԳԼԻՆ ԱՇՃԵԱՆ

Հանգուցեալ Ժազլին Սաթամեան-Աշճեանի մահուան Քառասուն օրն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Մարտ 24, 2019-ին, Փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd., Pasadena, California., յաւարտ Սուրբ Պատարագի:

Սգակիրներ՝ Եղբայրը՝ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Մատչէն Սաթամեան եւ զաւակը՝ Լեւոն եւ համայն Սաթամեան, Աշճեան, Գարայեան, Մաալուֆ ընտանիքներն ու հարազատները:

Հայկական Բլուր

Շարունակուած էջ 16-էն

կանոնին»: Իսկ թէ ո՞րն է կարգ ու կանոնը... տո՛ւնը... հետեւողական դաստիարակութիւնը... «Մամուլը ուղղակի կապն է ազգին հետ», կը հաւատայ Սահակ: «Վահան» շաբաթաթերթը տասներկու էջ է եւ կը պարփակէ իր մէջ չորս էջ հայերէն: «Եթէ մէկ հայ պիտի փրկենք, պէտք է զայն ընենք», վճռականօրէն ըսաւ Սահակը՝ հաւատարմով իր ու մամուլի առաքելութեան:

Վարդանուշ Թոփաքալաշեանը խմբագիրն է «Երեւան» թերթին, որ հիմնուած է 1944 թուականին: Թերթը ստիպուած է իր մէջ ներառել պուլկարերէն բաժինը, բայց Վարդանուշ հայերէն բաժինը միացուցած է տեղական լեզուին եւ նոյն էջին. «Այս ձեւով հայը, որ պուլկարերէն բաժինը կը կարդայ, կրնայ նոյն էջին վրայ նաեւ տեսնել հայերէնը եւ փորձէ կարդալ», ըսաւ Վարդանուշ, բայց չուշացան նաեւ Վարդանուշին մտահոգութիւնները:

«Երեւի տակաւին երկու տարի մը եւս կրնանք տոկալ տպագիր այս մեր թերթը հրատարակելու մէջ, ըսաւ Վարդանուշ: - Բաժանորդներուն թիւը կը նուազի, բայց նաեւ՝ նուիրատուներուն»: Վարդանուշին մտահոգութիւնները մեր համահայկական տպագիր մամուլի մարտահրաւէրներէն են: Ինք բացառութիւն չէր կրնար կազմել:

Սոնա Աւագեան-Պետրոսեանը նախագահն է Հայ Բարեգործական Ընդհանուր միութեան Սոփիայի մասնաճիւղին: Միութեան եւ գաղութի կարգ մը անդամներուն հետ մեր հանդիպումին ան ընդգծեց. «Հայը պէտք է վերապրի իր հաւատքը, որպէսզի վերագտնէ իր ինքնութիւնը, իր պատմութիւնը եւ յուշերը: Հաւատքն է, որ մեր «ես»-երը պիտի ուղղէ ճիշդ ճամբուն մէջ»:

Ռատի Ափոսթոլովը Պուլկարի մեր Աստուածաշունչի ընկերութեանը գրասենեակի տնօրէն գործակիցն է: Ան ընկերակցեցաւ իմ հանդիպումներուս՝ Պուլկարի աչցեցելու թեանս ընթացքին: Բայց Ռատին ալ ունէր իր վկայութիւնը: «Դպրոցական տարիներէս արդէն լաւ էի հայերու մասին», ըսաւ ան: - Մենք սորված ենք պուլկար գրող Փէյօ Եաւորոֆի մէկ բանաստեղծութիւնը՝ «Արմէնա» (Հայեր) գրական գործը: Փէյօ գրած է այս բանաստեղծութիւնը մեծ յարգանքով եւ սքանչացումով՝ հայ ժողովուրդին նկատմամբ», եզրափակեց Ռատին:

Փէյօ Եաւորոֆի կիսանդրին կանգնած է այսօր հայկական բլուրին վրայ: Եթէ պուլկար բանաստեղծը սքանչացած է հայուն եւ անոր մշակութային արժէքին վրայ, հապա մե՞նք, հայեր: Պուլկարիա ու տակաւին քիչ մը ամէն տե՞ղ...

Հայն ալ պարտի ու պիտի «սքանչանայ» իր մշակոյթով: Հայն ալ պարտի ու պիտի տածէ իր «յարգանքը» իր արժէքներով լեցուն կեանքին վրայ: Ե՛ւ «սքանչացումը», ե՛ւ «յարգանքը» ունին կարեւոր պարտականութիւն եւ պարտաւորութիւն:

Հայկական բլուրը, հոն, ուր հայուն արժէքի եւ ինքնութեան կեանքերը կը կերտուին: Եւ այս բոլորը պէտք է պահպանուին:

Եւ Հայկական բլուրը: Եթէ Փլովտիւ է, բայց քիչ մը՝ ամէն տեղ, հոն ուր հայ կայ:

«Մենք հոս գործ ունինք ընելիք»:


Իսկ գո՞րծը... Հայկական բլուրը ամուր պահելն է: Փլովտիւ, բայց՝ ամէն տեղ, ուր որ հայեր եւ հայկական բլուրներ կան: Եւ Հայկական բլուր(ներ)ը ամուր պահելով է, որ կը շարունակուի հայուն երթը...




Legacy Realty
Nick Karasarkisian
 Broker - CalBRE # 01022153
 2275 Huntington Dr., #117
 San Marino, CA 91108
 Phone: 213.706.9990
 e-mail: nickkarasarkisian@gmail.com
 www.legacyrealtyca.com



VA Print Media



Book Printing & Binding • Hard Covers
 College Dissertations • Year Books
 Restoration of Old Books & Bibles
 Newspaper Archiving



Vahe Atchabahan
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
 Tel: 626-793-6220
 Cell: 626-354-5924
 vamedia@yahoo.com
 www.vaprintmedia.com

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ

Շարունակուած էջ 13-էն

2019 թուականը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակուել է որպէս Ընտանիքի տարի: Այս շրջանակներում ժողովականները անդրադարձ կատարեցին հայ ընտանիքի առջեւ ծառայած արդի խնդիրներին:

Մեծարանքի Գաշկերոյթ Նուիրուած

Շարունակուած էջ 7-էն

Միութեան անունով էսթեր Չէլչեպեան-Թօկնոճճին եւ մեծարեալին պարգեւատրեց ոսկեմետալով մը:

Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան տնօրէն Վեր. Պերճ ձամպագեան քաղաքէս բացակայելուն պատճառով իր ողջոյնի գրութիւնը կարդաց վեր. Սերոբ Մկրտիչեան, որուն մէջ կը շեշտուէր «Մշակը՝ արժանի է իր վարձքին»:

Ամերիկայի Հայ Աւետ. Ընկերակցութեան գործադիր տնօրէն Զաւէն Խանճեան Վեր. Վահան Թութիկեանը բնութագրեց որպէս աստուածային կոչում ունեցող անձ մը, որ լի է սիրով ու յարգանքով եւ իր իմաստալից ու ծառայասէր աշխատանքով ունեցաւ արդիւնաւէտ գործունեութիւն: Ան իր այլազան նիւթերով հարուստ շտեմարան մը ունէր, հանրագիտարանի մը նման...: Մեծարանքի երեկոյնի տեղի

յաղթահարման գործում Հայոց Եկեղեցու հովուական առաքելութեանը հայրենիքում եւ սփիւռքում՝ որդեգրելով Մայր Աթոռի եւ թեմերի կողմից իրականացուելիք մի շարք հոգեւոր, սոցիալական, գիտայ-ճանաչողական, հովուական, քարոզչական ծրագրեր:

ունեցաւ նաեւ զեղարուեստական կոկիկ յայտագի մը: Դանիէլ Վարուժանի «Սերմնացան»ը կարգա Սոնա Խանճեանը, իսկ շնորհալի երգչուհի Արփի Այնթապեան մեկնաբանեց «Քեզմէ Զատ», «Make me a Blessing», «Բարի Արագիլ» եւ «Քէլէ Քէլէ» երգերը:

Վերջին խօսք առնողը եղաւ օրուան մեծարեալը Վեր. Դոկտ.՝ Վահան Թութիկեան: Ան իր երախտագիտութիւնը յայտնելէ ետք Աստուծոյ, շնորհակալութիւն յայտնեց սոյն միջոցառումը կազմակերպողներուն, ելոյթ ունեցողներուն եւ ներկայ հասարակութեան, մաղթելով իրենց ամենայն բարիք:

Աւարտին ներկայ ժողովուրդը հոգեւորականներու գլխաւորութեամբ երգեցին «Հայր Մեր»ը (դաշնակի ընկերակցութեամբ էսթեր Ասիլեանի):

Գնահատելի եւ տպաւորիչ երեկոյթ մը արդարեւ:
Գ. ՄՈՒՈՅԵԱՆ



APRIL 24

UNITED

WE MARCH

TURKISH CONSULATE 1PM

